



X

ՍՆԱՊԱՋՏՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ

(ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ)

Ի՞նչ է սնապաշտութիւնը. խօսքի և լեզուի նշանակութիւնը:  
Ներվային—հոգեկան հիւանդութիւններ, իստերիա, Կախարդներ,  
վհուկներ, խարոյկներ. Լուսաւորութիւն, գիտութիւն.վերջին խօսք:

Ա. ՊԵՏՐՈՎԻՇ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»

1904

Խմբ 24

16438

Дозволено цензурою. С.-Петербургъ, 24 Марта 1904 года.



30-2008

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐՔԻՆ

Ոչ միայն մեր հասարակ ժողովրդի, այլ և ուրիշ տեղերում, ուրիշ ժողովուրդների մէջ էլ մինչև այժմ գոյութիւն ունեն բազմաթիւ թիւսամեր, նզովքներ և ուրիշ սնապաշտական սովորութիւններ ու աւանդութիւններ:

Սնապաշտութիւնը տարբեր ձևեր ունի ոչ միայն իւրաքանչիւր առանձին երկրում, այլ և միւնցն երկրի գանազան տեղերում:

Սնապաշտութեան շատ ձևեր շարունակում են իրանց գոյութիւնը իրրև խօսակցութեան առանձին դարձուածքներ, թէև բառերը այլես չեն համապատասխանում նրանց իսկական նշանակութեանը: Աչա չէնց այդ պատճառով մի կողմ թողնելով մանրամասնութիւնները, աւելորդ չելինի ընդհանրապէս բացատրել, թէ որտեղից են սկիզբ առնում մի քանի սնապաշտ հասկացողութիւններ:

Հոգեկան այդ մոլոր դրութեան բնորոշ յատկութիւնը այն սնապաշտ հաւասն է դէպի մի որևէ հմայիչ գերբնական ոյժ, որով մարդ կարծում է, թէ այդ ոյժը կեանքի ամենանշանաւոր բովէններում կարող է ցոյց տալ իր արտակարգ ազգեցութիւնը:

Եւ սնապաշտութիւնների մի ամբողջ շարք ամբոխային տգիտութեան շնորհիւ մտել են կեանքի մէջ, աղդում են ազգերի կեանքի մանր ու խոշոր երեսյթների վրա:

Մարդկային մորի զանազան մոլորութիւններն ու սնապաշտութիւնները կազմուել են այն հեռաւոր ժամանակում, երբ մարդու ներքին աշխարհն էլ ամբողջապէս կախում ունէր արտաքին երեսյթներից, երբ դեռ չեր զարթնել մարդկային ազատ կամքի հզօրութեան զիտակցութիւնը:

Մեր զբքոյկի նպատակն է փորձել ընթերցողի հետ  
մի քայլ անելու գեղի այդ հարցերի խորքը, և ինչ չա-  
փով որ թոյլ է տալիս ժամանակակից գիտութիւնը, ար-  
տայսցտել այն առաջադիմութիւնը, որ կատարել է մարդ-  
կային միտքը, անընդհատ կերպով որոնելով ճմարտու-  
թիւնը:

Եյս զբքոյկը որոշ չափով լրացնում է այն ամենը,  
ինչ որ ասուած է մեր «Քուն և երազ» զբքոյկում:

Մոլորութիւնների, սնապաշտութիւնների ամենա-  
մեծ մասը առաջ է գալիս այն պատճառով, որ մեր հասա-  
րակութիւնը տգետ է, որ մեր ժողովուրդը չունի կանո-  
նաւոր կրթութիւն ու զարգացում:

Մեղանում ամեն տեղ թագաւորում է կոպիտ եսա-  
սիրութիւնը, չը կայ կամք, եռանդ, աշխատասիրութիւն:  
Եւ այդ ամենը ոչնչացնում է մեզ հոգեապէս:

Երբ որ հասարակութեան լաւագոյն մասում տիրում  
է բարասրութիւնը, այն ժամանակ նա աւելի մեծ չափ  
է ստանում ամրոխի մէջ, հասնելով համարեա զազանու-  
թեան աստիճանին:

Ժամանակ է սթափուելու, որովհետեւ մենք կորչում  
ենք հոգեապէս և բարոյապէս:

Մեղանում չը կայ նոյն իսկ ձգտում գեղի հասա-  
րակական աւելի լաւ կեանքը. մենք անտարբեր սպասում  
ենք. բայց սպասողական զրութիւնը մահից էլ վատ է:

Պէտք է շտապել եռանդ գործ դնել որովհետեւ ժա-  
մանակը ուկուց էլ թանկ է:

ԲԺ. Ա. Բ.

Ս. Պետերբուրգ 1904

Ա.

Մտածողութեան հիմնական միջոցը համեմատութիւնն է: Իսկ այդ համեմատութիւնը կախում ունի մտածողի հոգեկան մակերեռովթից, մտաւոր պաշարից:

Խօսքը գիտակցական մտածողութեան, ինքնագիտակցութեան, ինքնաբնորոշման և խելացի ստեղծագործութեան նախական աղբիւրն է:

Մարդը արտաքին աշխարհի պատկերները իւրացնում է իր ինքնազիտակցութեան ձեռվի: Այդ բանը աւելի ևս ուժեղ էր նախնական մարդու մէջ, որը գեռ սովոր չէր վերացական պատկերաւոր մտածողութեան:

Երբ նա տեսնում էր անյալտ պատճառից առաջացած մի կեանք, շարժողութիւն, կամքի և ոլժի արտայալտութիւն, բնութեանը կամ մարդանման մի էակի էր վերագրում այդ բոլորը:

Խօսքը բաւական նշանաւոր գեր է կատարել աշխարհալին երեսովթները հասկանալու գործում: Նա մի տեսակ կենդրոն էր նկատուած նմանութիւնների համար:

Շատ բան հեռուից միատեսակ էր երեսում, բայց երբ խօսքի միջոցով մօտենում էր գիտակցութեանը, այն ժամանակ կորցնում էր իր խարուսիկ արտաքինը. իսկ համեմատութեան միջոցով բացւում էր նաև նրա տարբերութիւնը:

Ահա այդպիսով զարգանում էր մարդկային խելքի հզօր զէնքը, որ վերլուծում (անալիզ) է կոչում: Այդ զէնքը շարունակ անհանգստացնում է միտքը, շարունակ նորանոր հորիզոններ է բաց անում նրա առաջ, հետզհետէ պատրաստելով այն հիմքը, որի վրա պէտք է հասապառուի նոր աշխարհահայեցողութիւն:

Զարգացման առաջին աստիճաններում մարդը դժուարութեամբ է տարբերում իր անձնաւորութիւնը՝ շրջապատող առարկաներից ու երեսովներից: Նա չափազանց սերտ կապով է կապուած բնութեան հետ:

Այդպիսի դրութեան պերճախօս օրինակներ են առաջ բերում մանկական հոգերանութեան ուսումնասիրողները: Նրանք ցոյց են տալիս, որ երեխան միայն բազմաթիւ փորձերից յետոյ ըմբռնում է իր մարմնի մասերի ընդհանուր կապը, հասկանում է, որ այդ բոլորը պատկանում են մի առանձին «Ես»-ի, որը տարբերում է նրան բոլոր միւս անհատներից:<sup>1</sup>

Սակայն այդ գեռահաս մտածողը իր ամենօրեայ կեանքում նկատում է, որ զանազան երեսովներ շարունակ ոչնչացնում ու բարութանդ են անում այն եղրակացութիւնները, որոնք ձեռք էին բերուած խելքի յամառ չանքերի շնորհիւ:

Եւ ահա սկսում է կասկածանք, տատանում. առաջ է գալիս նորանոր հարցերի մի ամբողջ շարք:

<sup>1</sup> Տես իմ «Առողջ և հիւանդ երեխայի ոգին» դրբուկը:

Միտքը եռում է, տանջում է, մաքառում,  
ուսումնասիրում է և վերջապէս յաղթական ձեռվ  
ուղղում է սխալը, լրացնում է թերութիւնը:

Բայց մի՞թէ պատմութեան ընթացքում քիչ  
են պատահում մարդկալին մոլորութիւններ: Հէնց  
այդ մոլորութիւններից կազմւում է սնապաշտու-  
թիւնների շղթան: — Սնապաշտութիւնն ու կախար-  
դութիւնը, ասում է Լեմանը, մարդկալին մտքի առա-  
շին քայլերն են կրօնական և գիտական ասպարէ-  
գում:

Սնապաշտութիւն — դա այն սխալ ճանապարհն  
է, որի վրա ակամալից կանգնում է մարդկալին  
միտքը և որի վրալից անցնելով, նա գնում հասնում  
է պարզ ու խոր հասկացողութիւնների:

Սնապաշտութեան սահմանները չափաղանց պայ-  
մանական են: Մարդկալին աշխարհահայեցողութիւ-  
նից է կախուած մի որևէ հասկացողութիւն սնա-  
պաշտ անուանելը:

Բողոքական երկիրներում զարգացած մարդ-  
կանցից շատերը դեերին, տեսիլըներին ու չար ոգի-  
ներին հաւատալը սնապաշտութիւն են համարում  
հէնց այն պատճառով, որ աւետարանական վար-  
դապետութիւնը անհրաժեշտ դաւանանք չէ համա-  
րում այդ բաներին հաւատալը:

Հաւատացեալ կաթոլիկը բոլորովին այլ կերպ  
է վերաբերւում դէպի այդ հարցը: Կաթոլիկական  
եկեղեցին սովորեցնում է, թէ նոյն խել մեր օրե-  
րում էլ չար ոգիները, դեերը կարող են հաստա-  
տուել մարդկանց մէջ:

Կրկնում ենք, մի որեւէ կարծիք սնապաշտ համարելը կամ ոչ, դա մարդկային աշխարհահայեցողութիւնից է կախուած։ Այդ մասին կարելի է դատել ժամանակակից մտքի զարգացման աստիճանով։

Նոյն տեսակ է և սնապաշտութեան վերաբերմունքը դէպի կրօնը։ Շատ դէպքերում սնապաշտութիւնը նախնական կրօնի մնացորդն է կազմում։

Այն, ինչ որ առաջ բոլորի համար էլ հաւատալիքի առարկայ էր, ինչ որ պաշտօնապէս ընդունուած էր կրօնի կողմից, որոշ ժամանակից յետոյ ժողովրդական սնապաշտութիւն է դառնում, եթէ համապատասխան կրօնը ոչնչանում է։ Այդպիսի դէպքերում երբեմն մեծարելի աստուածը ատելի սատանայ է դառնում։

«Դև» խօսքը յոյների մէջ առաջ նշանակում էր աստուածութիւն. որոշ ժամանակից յետոյ նա սկսեց գործ ածուել իրրե «ստորին աստուածութեան» կամ «ստորին տեսակի աստուածների» հասկացողութիւն, իսկ վերջը երբ թուլացած կռապաշտութիւնը պաշտօնապէս էլ վերջացաւ, այդ խօսքը գարծաւ «չար էակների» անուն։ Վերջապէս միշին դարերի խաւարի թագաւորութեան ժամանակ նա գործ էր ածւում զանազան սատանաների մասին եղած հասկացողութիւնն արտայալտելու համար, այսինքն ստացել էր իր այժմեան իմաստը։

Քրիստոսից յետոյ Ա. դարումն իսկ եկեղեցական հալրերը հաւատում էին դեերին։ Այդ հաւատը եկեղեցական դաւանանք էր դարձել։ Դրա հետ միասին նրանք համոզում էին, թէ դեերից չը պէտք է

վախենալ, որովհետև նրանք չեն կարող վնասել իսկական քրիստոնեային:

Անցան երկար ու ծիգ տարիներ ու դարեր և զեւրի մասին եղած հասկացողութիւնը որոշ չափով փոփոխութեան ենթարկուեց:

Շատերն սկսեցին հաւատալ, թէ դեւրի հետ «գրաւոր պայման» կապելով, կարելի է նրանց օգնութեամբ շատ գործեր կատարել, շատ օգուտներ ձեռք բերել, միւնոյն ժամանակ վնասելով մերձաւորներին:

Այդ հաւատալիքը ահազին սարսափներ առաջցրեց, բազմաթիւ մարդկանց կորստեան մատնեց:

«Կախարդների» մասին դատավճիռները անվերջ շարունակուեցին, մինչև որ բնազիտութիւնը խելքի բերեց մարդկանց, թէև մի քիչ ուշ:

Դրա հետ միասին անհետացաւ դեւրի հետ պայման կապելու վարդապետութիւնը:

Սակայն անհերքելի մնաց այն փաստը, որ մարդկալին մտքի ու երևակայութեան այդ ամենայիմար եղակացութիւնը մի ժամանակ կրօնական հաւատալիք է եղել:

Այն, ինչ որ սնապաշտութիւն է մեզ համար, իր ժամանակում եղել է կրօնական կամ գիտական բարձր հասկացողութիւն: Այսպէս օրինակ, վայրենիների ամենազարգացած կրօնական գաղափարները սնապաշտութիւն կարող են համարուել մեզ համար:

Այդպիսով եթէ մենք առժամանակ մի կողմ թողնենք աւելի լուսամիտ կրօնական հասկացողութիւններն ու գիտական հայեացքները և ուսումնա-

սիրենք, թէ մարդկութիւնը ինչպէս է հասել այդ  
բարձր աստիճանին, այն ժամանակ կը տեսնենք որ  
տարբեր ժողովուրդներ տարբեր ժամանակներում բո-  
լորովին տարբեր աշխարհայեցողութիւն են ունեցել:

Մենք իրաւունք ունենք այդ ամենը մոլորու-  
թիւն համարելու, որովհետեւ նրանք անցեալի աշ-  
խարհայեցողութիւն են, մոլորութեան ճանա-  
պարհ են, որ մարդկութիւնն ստիպուած էր անց-  
նել: Ուրեմն ինչ որ չէ համապատասխանում առողջ  
գատողութեանը և հասուն աշխարհայեցողու-  
թեանը, նա սնապաշտութիւն է:

Բ

Եթէ մարդ հաւատում է զեերի զոյութեանը,  
եթէ հաւատում է, որ նրանց օգնութեամբ կարելի  
է այնպիսի գործեր անել, ինչ որ բոլորովին ան-  
հնարին է այլ կերպ՝ պարզ է, որ նա այդ գէպ-  
քում կաշխատի ծեռք բերել զեերի օգնութիւնը,  
կը ծգտի գէպի նրանց հովտնաւորութիւնը:

Սնապաշտութիւնը թէորիան է, իսկ զիւթու-  
թիւնը, կախարդութիւնը այդ թէորիայի հետեւանքը:  
Կախարդութիւնը տռաջ է զալիս սնապաշտութիւ-  
նից նիշտ այնպէս, ինչպէս որ կրօնական զանազան  
հասկացողութիւններից առաջ է զալիս որոշ պաշ-  
տամունք, ժամաստցութիւն. կամ ինչպէս որ բնու-  
թեան ոլմերը պարզելուց լետոյ առաջանում է նրանց  
դորժագրութիւնը:

Եթէ մարդ հաւատում է, թէ չար ոգիները  
կարող են վնասներ պատճառել, այն ժամանակ,

ի հարկէ, պէտք է որոնէ յուսալի միջոցներ այդ  
վնասներից ազատ մնալու համար: Այդպիսով ծնունդ  
է ստանում կախարդութիւնը:

Կարճ առաջ սնապաշտութիւնից առաջացած  
իւրաքանչիւր վարժունք դիւթութիւն է կամ կա-  
խարդութիւն:

Դրա վրա պէտք է աւելացնել և այն, որ իւրա-  
քանչիւր գործողութիւն կախարդական է համար-  
ւում, եթէ նրա բացատրութիւնը սնապաշտ հաս-  
կացողութիւնների վրա է հիմնուած:

Երեւակայենք, որ մի որեւէ վայրենի, որը իր  
ցեղի նախապաշտամունքների ազգեցութեան տակ է  
գտնւում, տեսնում է ֆիզիկական այնպիսի փոր-  
ձեր, որոնք նրա վրա ուժեղ տպաւորութիւն են  
թողնում: Այդ դէպքում վայրենին իր հասկացո-  
ղութիւնների համեմատ բացատրութիւն կը տայ-  
կատարուած փորձերին, և նրա աչքում փորձ կա-  
տարողը կախարդ կը դառնայ:

Ամեն տեղ, ուր որ քիչ բաղաքակրթուած ժո-  
ղովուրդը շիւում է աւելի բարձր բաղաքակրթու-  
թեան տէր ժողովրդի հետ, առաջինի աչքում երկ-  
րորդի գործերը կախարդական կերպարանք են ստա-  
նում:

Շատ անգամ ամենահասարակ, բնական երե-  
ւոյթը կամ գործողութիւնը կախարդութեան է վե-  
րազրւում:

Զէ որ առանձին ոչինչ չըկայ, երբ պառաւ  
կինք նանապարհ գնալիս անցնում է գաշտի միջով:  
Բայց երկու երեք դար մեզանից առաջ դա չափա-

զանց վտանգաւոր էր համարւում: Դժբաղգաբար մինչեւ այժմ էլ մի քանի խուլ անկիւններում դեռ գոյութիւն ունի այդպիսի սնապաշտութիւն:

Եթէ դաշտում արածող հօտից մի ոչխար հիւանդանում է, իսկոյն մեղքը գցում են մօտից անցնող պառաւի վրա:

—Նա կախարդեց հօտը, նա հիւանդացրեց ոչխարին—կը նշանակէ նա վհուկ է... Այդպիս է մտածում սնապաշտ ամբոխը:

Այդպիսով միայն դեերին հաւատալը չէ կախարդութիւն համարւում, այլ նաև այն բոլորը, երբ բնական դէպքերին ու երեսոյթներին կախարդական բացատրութիւն է տրւում:

Սնապաշտ հասկացողութեան հիմքն էլ մի որեւէ դիտողութիւն է, փորձ է, բայց սխալ բացատրուած: Հէնց այդ սխալ հասկանալուց է առաջ գալիս սնապաշտութիւնը:

Ի հարկէ հետաքրքիր է մատնանիշ անել այդ սխալները, որոշ դիտողութիւնների այդպիսի սխալ բացատրութիւնները, բայց աւելի ևս հետաքրքիր է դտնել այն ֆիզիքական և հոգեկան երեսոյթները, որոնցից առաջել են այդ սխալները:

Բանը նրանումն է, որ կրօնի ու գիտութեան ելակէտը, աղքիւրը միենոյն ամբողջութիւնն է կազմում—զգացողական ըմբռնումն: Հէնց այդ պատճառով նախնական կամ ուրիշ խօսքով ասած՝ չը զարգացած մարդու կրօնի ու գիտութեան սահմանները գրեթէ անորոշ են, անբաժանելի են: Մտաւոր նեղ հորիզոնի պատճառով վայրենին ամենա-

մօտիկ առարկաներն անդամ հաւատի, պաշտելու առարկայ է դարձնում: Մտաւոր զարդացման աստիճանի համեմատ հաւատի ու զիտութեան սահմանները աւելի ու աւելի նկատելի են դառնում, աւելի ու աւելի են տարբերւում միմեանցից:

Սնապաշտութիւնը միակերպ է բոլոր ժամանակներում, բոլոր ազգերի մօտ: Դա երկրպագութիւն է այն ոգուն, որը մարդկային զգացմունքներ ունի և գործում է մարդու նման, ներկայ է լինում մի տեղում և բացակայում մի այլ տեղում, սրբութիւն է պարզեցում մի քանի տեղերի, բայց ոչ բոլորին, ողորմած է զէպի մի մարդ և չարասիրա՝ զէպի միւսը. բարկանում է կամ գոհ մնում, նայելով թէ ինչ չափով են նրան յարգում: Նա թշնամի է մարդկային կեանքի ուրախութիւններին, անկաշառ է և այլն և այլն:

Գ.

Մարդ արարածը տեսնում էր աշխարհում կատարւող փոփոխութիւնները, բայց դրանց պատճառները չէր հասկանում:

Նա չէր կարողանում ըմբռնել, թէ ինչից են շարժւում նրա վերեւում կախուած ամպերը, ի՞նչն է կալծակ առաջացնում և որոտմունքով ամբողջ աշխարհը սարսափեցնում: Այդ պատճառով էլ նա եղրակացրեց, թէ աշխարհում ապրում են զանազան աստուածութիւններ, որոնք տարբեր ազգեցութիւն ունեն տիեզերքի ու մարդկութեան վրա:

Նա ինչ վերաբերմունք որ ունէր դէպի բնութեան ոյժերը, նոյնը ցոյց տուեց և դէպի իր ստեղծած աստուածութիւնները:

Նա ինչպէս որ թոյլ ու անզօր էր բնութեան ահեղ ոյժերի առաջ, նոյնը մնաց և աստուածութիւնների վերաբերմամբ:

Բնութեան մէջ երկու հակագիր երեսոյթներ կալին՝ կեանք և մահ, բարութիւն և չարութիւն։ Այդ պատճառով նա աստուածութիւններին էլ երկու կարգի բաժանեց՝ բարի և չար։

Մարդը միշտ էլ իր աստուածներին գերբնական արարածներ է համարել, բայց իր նմանութեամբ և բնութեան երեսոյթների մէջ արտայալտող։

Այդ աստուածները թւում էին մարդուն մերթ մաքրող, ամեն ինչ կլանող կրակի տեսքով և նա անուանում էր նրանց՝ Վաալ, Ապոլոն, մերթ անեցնող զրի տեսքով և նա անուանում էր նրանց Աստարա կամ Աֆրոդիտ։ Նրա կարծիքով զուարնութիւնների աստուածը խոր նահիճներից էր դուրս եկել։

Փոխւում էր մարդը. Նրա հետ փոխւում էին նաև աստուածները։ Մարդու և աստուածների ձեւափոխութիւնը կատարւում էր միաժամանակ։ Երբ մարդը բաղաբակրթւում էր, կարիք էր զգում իր աստուածներն էլ կատարելազործելու։ Նա մեղմացնում էր նրանց դաժան բարբերը, քնքշացնում էր նրանց կոպիտ սովորութիւնները։ Երբ դողում էր երկիրը, երբ փոթորիկը աղմուկով չարդում էր ծառերն ու տապալում ժայռերը, նա եղիս մարդարէի նման ասում էր. — Սա իմ Աստուածը չէ... նա

ականչ փայփայող քաղցր ու քնքոյշ հնչիւնների մէջ  
է արտայալտում:

Պատկերացնելով աստուածներին մարդկալին  
ձեռվ, կռապաշտ ազգերը այսպէս ասած՝ մարդկայ-  
նացրին բնութիւնը:

Միջին դարերում հաւատում էին անտառալին  
և շրալին ողիներին, որոնց ձայնը լսում էին առու-  
ների կարկաչից: Հաւատում էին օդալին ողիներին,  
որոնք, հաւատացողների կարծիքով, ոչ այլ ինչ էին,  
եթէ ոչ անթե հօգիներ:

Յոյները ծովալին ձկնկուլի տխուր գոչից, ծի-  
ծեռնակի նուռողիւնից, բուի սուր բացականչութիւ-  
նից ողբերգական ապագայ էին գուշակում:

Հնդիկը կենդանիների ու բոյսերի մէջ էր որո-  
նում իր բաղդը, իր հակատագիրը:

Ալգախի աշխարհանալեցողութիւնը, որ մի նոր  
զիտական թէորիա էր այն ժամանակուայ համար,  
հետզհետէ աւելի ու աւելի զարգանում է, իր հետ  
անեցնելով և ողիների աշխարհը:

Գերբնակտն դեխ հիմնական՝ նախնական տիսլը  
թափառաշրջիկ մեռելն էր, որի համեմատ ժողո-  
վրդական երեակալութիւնը ստեղծում էր և բոլոր  
մնացածներին:

Երկրից հեռացած ալդ ողին սկսում է մարդ-  
կալին զիտողութեանն ու հասկացողութեանը ան-  
մատչելի թափառումներ կատարել և զարմանալի  
գործեր անել:

Ալգախով զարգանում է մի առանձին վար-  
դապետութիւն ուրուականների մասին և դրա հետ

զուգահեռաբար թեթև բացատրութիւններ են ստանում երկնքի ու երկրի բազմազան երևոլթները:

Նախնական մարդու երևակալութեամբ այդէակները կարող են մերթ երևալ, մերթ աներեոլթանալ: Մի քանիսն էլ աւելի բարդ ու անհասկանալի ընդունակութիւններ ունեն:

Որբան շատ մարդ է մեռնում, նոյնքան մեծանում է ոգիների աշխարհը: Ալսպէս օրինակ արարի կարծիքով անապատն էլ այնքան խիտ է բնակեցրած ողիներով, որ նա մի որևէ առարկալ վարդցելիս՝ խսկոյն ներողութիւն է խնդրում այն ոգուց, որին իր կարծիքով դիպել է առարկան:

Դրանից յետոյ հարց է առաջ գալիս, թէ ի՞նչ են անում ողիները. ի՞նչ վերաբերմունք ունեն նրանք դէպի մարդիկ, դէպի բնութիւնն ու շրջապատող առարկաները: Զէ՞ որ նրանք չեն կարող շարունակ աննպատակ թափառել մարդկանց շուրջ:

Մարդկալին երևակալութիւնը բնակեցնում է ողիներին բնութեան բոլոր թագաւորութիւնների մէջ: Ամբողջ օդը, իւրաքանչիւր սարը, թումբը, ժայռը, իւրաքանչիւր անտառ, իւրաքանչիւր ձառնի որևէ ոգու բնակավալը է դառնում:

Դ

Մարդու մէջ որբան շատ է զարգանում բարու և չարի, բարեկամութեան և թշնամութեան, ախորժելի և անախորժ զգացմունքները, նոյնքան պարզ կերպով բաժանում է ամբողջ աշխարհը երկու մասի՝ բարի և չար, հովանաւորող և թշնամի:

Այդ թշնամի բանակները կարող են կռիւ սկսել միմեանց դէմ—օրինակ հոմերի լիշած աստուածների նշանաւոր կռիւները հին Յունաստանում,— կարող են ոչնչացնել միմեանց, վրէժ լուծել այն մարդկանցից, որոնք թշնամի աստծու հովանաւորութեան տակ են:

Այդպիսի հասկացողութիւնից առաջ է գալիս մարդկանց այն կարծիքը, թէ զանազան հիւանդութիւնների, օրինակ էպիլեպսիալի, զառանցանքի, խելազարութեան<sup>1</sup> պատճառը չար աստուծու, չար ողու ազգեցութիւնն է:

Այդ միևնուն ձեռվ ենթագրում են, թէ մարդարէութեան, բանաստեղծութեան և այլ շնորհքները տրւում են իբրև ողորմութիւն ողիների կողմից՝ իրանց սիրելիներին:

Անզլիացի նշանաւոր գիտնական Սպենսերը սրամիտ կերպով հարցնում է. «Եթէ թշնամի ողին մտել է մարդու մարմնի մէջ, մի՞թէ չէ կարելի նրան դուրս արտաքսել այնտեղից, կամ չէ կարելի արդեօք այնպէս անել, որ մարդ չը կարողանալ ապրել այդպիսի մարմնով»:

Եւ ահա մարդկային զարգացման մակերևոյթի համեմատ միջոցներ են մշակւում, այդ թշնամուն դուրս արտաքսելու համար։ Սկզբում նա պատկերանում էր մարդանման լատկութիւններով, իսկ վերջին ժամանակներում—աւելի վերացական ձեռվ՝ իր-

<sup>1</sup>Տես «Ուղեղիստիմիթիլիս» և «Քուն և երազ» իմ գրքոյները։



ըեւ «դե», «սատանայ», «մոլորեցնող», իբրև մի որեւէ յանցանք կամ հիւանդութիւն:

Սկզբում փորձում են հեռացնել չար ողին հիւանդի մարմնից ծիծաղով, զանգակի ծալնով կամ բղաւոցով: Այսպէս օրինակ Կալիֆորնիայում չար ոգուն վախեցնել են աշխատում զանազան շարժումներով, ծամաժոռութիւններով, հիւանդի վրա հազարով ևալն: Ամերիկայի վայրենիները նոյն նպատակի համար տրաքեցնում են մի բան, հրացան են արծակում, թմբկահարում են ևալն ևալն: Կիրպիդները բղաւում են հիւանդի վրա, ծեծում են մրտրակով, կծոտում են նրան, թքում են երեսին, նրա առաջ զանակ են շարժում ևալն ևալն:

Ոռուսաստանի շատ տեղերում էլ «հեքիմներ» երկու բուռնցըով պինդ սեղմում են հիւանդի փորք, որպէսզի չար ողին դուրս դայ:

Ծառալութիւնից աղատուած գիւղական մի զինուոր տենդ ունեցող հիւանդներին բժշկելու համար մի ամբողջ ժամ անդադար փողոցային հայկուանըներ էր թափում...

Եթէ չար ողին արդէն բուն է զրել մարդու մէջ և վախեցնելը նրա վրա չէ աղջում, այդ ժամանակ աշխատում են զանազան միջոցներով «թռնաւորել նրա զոյութիւնը», զզուեցնել նրան իր բնակավայրից: Նրան «ծուխ են տալիս», հիւրասիրում են զզուելի նիւթերով ևալն:

Այժմեան ժողովրդական բժշկականութեան մէջ այդ ձեռվ հիւանդութիւններ բժշկելու հայեցակէտը մնացել է իր ամբողջ ուժով:

Խուլ զիւղերից մէկում ապրում էր մի պառաւ հերիմ, որը գեղձախտաւոր երեխաներին կերակրում էր բաղի ծուի զեղնուցից և հաւի աղբից բաղկացած խառնուրդով։ Հիւանդներին ծուխ տալու համար գործ էին ածում ոչխարի աղբ և ուրիշ նիւթեր, որոնք ժանր-կծու ծուխ էին առաջացնում։

Զափազանցութիւն չէ դա, այլ դառն իրականութիւն, որին ականատես եմ եղել անծամբ, երբ զեռ զեմնաղիստ ժամանակս որսի էի զնացել և հանգստանալու համար զիւղ մտել։

Այստեղ միջանկեալ նկատենք, որ մեր աշակերտները, ուսանողներն ու ուսանողուհիները շատ մեծ օգուտ տուած կը լինէին թէ իրանց և թէ զիւղացիներին, եթէ ամառները գոնէ մի քանի ամիս ապրեն զիւղերում։

Զը մոռանանք, որ մեր ինտելիգենցիալի զըլիսաւոր նպատակներից մէկը պէտք է լինի՝ կռուել տղիտութեան դէմ, որը թանձր քողի նման ժածկել է մեր կեանքի հորիզոնը, որը շարունակ նընշում է մեզ իր ժանրութեամբ։

Պէտք է ուսումնասիրել այդ տղիտութիւնը, պէտք է նանաչել մեր ժողովրդին, նանաչել նրա բաղմազան հոգեկան-բարոյական պահանջները։

Եւ իսկապէս. ի՞նչ զիւղենք մենք մեր ժողովրդի ստորին խաւերի մասին։ Ոչինչ։ Նոյն իսկ յարգելի պ. Ե. Լալայեանցի «Ազգագրական Հանդէսը», որ այնքան գնահատելի նիւթեր է պարունակում իր մէջ, դժբաղդաբար շատ քիչ չափով է տարածւում, եթէ չենք սխալում։

Մեզ անձանօթ է ժողովրդի կենդանի ողին,  
որը լոյս է որոնում, որը ճնշուած է նոր երեոլթ-  
ների հոսանքի տակ:

Մենք չենք շփուռմ ժողովրդի հետ, մենք չպի-  
տենք, թէ տնտեսական բարոյական ի՞նչպիսի պա-  
հանջներ են առաջացել կեանքի նոր պայմանների  
ազգեցութեան տակ:

Ճիշտ է, վերջին ժամանակներս մերթ ընդ մերթ  
կազմակերպում են աշակերտական ճանապարհոր-  
դութիւններ կրթական նպատակներով, բայց դա մի  
կաթիլ է պահանջի ընդարձակ ովկիանոսում:

Հարկաւոր է աւելի զարկ տալ ալզպիսի ճա-  
նապարհորդութիւններին, աւելի խելացի կերպով  
կազմակերպել, որպէսզի մեր երիտասարդութիւնը,  
մեր ինտելիգենցիան ժանօթանայ ժողովրդի պա-  
հանջների հետ, հասկանայ նրա հոգեկան-բարոյական  
աշխարհը, ապրի նրա կեանքով:

Ի հարկէ ժողովրդի հետ ժանօթանալու հա-  
մար կան նաև ուրիշ շատ միջոցներ, բայց դրանց  
շարքում ճանապարհորդութիւնը համեմտաբար  
աւելի դիւրամատչելի ու հեշտ է:

Թող ուրեմն մեր երիտասարդները կազմակեր-  
պեն խմբակներ, ճանապարհորդեն գաւառներում,  
ուսումնասիրեն ժողովրդին կարիքները և նրանց  
բաւարարութիւն տալ աշխատեն:

Իտոնանք ալժմ մեր խնդրին, այսինքն սնա-  
պաշտ միջոցներով հիւանդութիւններ բժշկելուն:

Տգէտ ժողովրդի մէջ արմատացած է ալն կար-  
ծիքը, թէ շատ ու շատ հիւանդութիւններ առաջ

են գալիս չար ոգու ազգեցութիւնից: Եթէ մի որևէ զեղ կամ միշոց բժշկում է այդ հիւանդութիւնը, նրանք այդ դեղին ու միշոցին էլ գերբնական զօրութիւն են վերագրում:

Օրինակ շատ բոլուք բուժիչ ազգեցութիւն ունեն և դա բնական մի երեսլթ է. բայց սնապաշտ ժողովուրդը այդ ազգեցութիւնը գերբնական է համարում և ողիներին վերագրում:

Հասարակ մարդիկ կարծում են, թէ բոլոր զեղերը գերբնական ոյժ, մի ինչ որ խորհրդաւոր ազգեցութիւն ունեն: Նրանց կարծիքով հիւանդը որոշ զեղ ընդունելուց յետոյ իսկոյն պէտք է առողջանալ, որովհետեւ չար ոգին անկարող է իր համար անտանելի մժնոլորտում մնալ. նա հեռանում է:

Հէնց այդ պատճառով էլ զեղը որքան զզուելի է, նոյնքան ուժեղ է լինում. այդպէս է համոզուած տգէտ ժողովուրդը:

Թերթերունքների բորբոքում ունեցող մի հիւանդ կին պատմում է, թէ մի անդամ մորի է կերել և իսկոյն թարախ է հոսել ականչից: Այդ հիւանդի նման տղէտները հաւատացրել են նրան, թէ զեղձախտը չէ սիրել մորին և այդ պատճառով էլ թարախ է հոսել:

Մարդկալին դարձացման յետազայ աստիճաններում այդ հասկացողութիւնը աւելի վերացական ծեւ է ստանում և արձարծում այն կարծիքը, թէ չարութիւնը միայն չարութեամբ կարելի է արմատախիլ անել: Այդ կարծիքի վրա է հիմնուած «similia similibus curantur»—փիլիսոփայական

սկզբունքը, որ աւելի պարզ կերպով արտաքայտում է «մեխը միայն մեխով կարելի է դուրս քաշել»—առածի մէջ:

Այդ շարքին է պատկանում և այն սովորութիւնը, որ գոյութիւն ունի Սիրիում: Այդտեղ շատ անդամ երեխաներին ամենավատ անուններ են տալիս (օրինակ շան պոչ և ալլն), ենթադրելով, թէ վատ անուն ունեցող երեխան ուշ կը մեռնի:

Սիրիում ապրող եակուտների ընտանիքներում եթէ երեխաններ շատ են մեռնում, նրանք նորածինների սեռին անհամապատասխան անուններ են տալիս, համոզուած լինելով, թէ այդ ծեռվ կարելի կրլինի խարել չար ոգուն: Օրինակ նրանք մանուկին անուանում են «վատ աղջկի»:

Կալմիկները համոզուած են, թէ երեխանների մահացութիւնը առաջ է գալիս չար ոգիների աղջեցութիւնից: Հենց այդ պատճառով էլ նրանք երեխաններին զանազան կենդանիների անուններ են տալիս, որպէս զի մոլորեցնեն չար ոգուն:

## Է

Ենթադրենք, որ չար ոգին արտաքսուած է մի տեղից, ծեռք առած այս կամ այն միջոցի շնորհիւ զգուանք է տածում զէպի այս կամ այն առարկան, այս կամ այն անհատը: Բայց չէ՞ որ գա միայն ժամանակաւոր կարող է լինել, չէ՞ որ արտաքսուած ոգին կարող է դիմել ուրիշ տեղ, ուրիշ մարդկանց: Ուրեմն ցանկալի է նրան բոլորովին անզօր դարձնել և ոչնչացնել նրա չար աղջեցութիւնը: Այդ նպա-

տակով մարդը փորձեր է անում չար ոգուն բան-  
տարկելու, գաղթեցնելու և այլն:

Այսպէս օրինակ, տենդն սկսուելուն պէս հի-  
ւանդը հանում է շաղիկը և դնում քարի տակ կամ  
գետին զցում, ենթագրելով, թէ տենդը ջրի մէջ  
կարելի է խեղդել:

Թէ հին և թէ ժամանակակից աղգերի մէջ  
շարունակ կատարուել են փորձեր՝ չար ոգուն մի  
այնպիսի տեղ փակելու, որի վրա լիապէս իշխել կա-  
րող է ինքը—մարդը, որտեղ նա կարող է չար ոգուն  
պատժել կամ ներել, մի խօսքով՝ պահել իր իշխա-  
նութեան տակ:

Այդպիսի մտածողութիւնը հարուստ, պատ-  
րաստի հող է գաել «հոգիները մի տեղից մի ուրիշ  
տեղ բնակեցնելու» վարդապետութեան մէջ, որ իր  
սկիզբն առել է մարդկալին զարդացման նախնա-  
կան աստիճաններից և իր ոյժը պահպանել նաև  
քրիստոնէութեան շրջանում:

Մարդիկ համոզուած էին, թէ աշխարհում ամեն  
ինչ կարող է կերպարանափոխուել: Եւ բնութիւնն  
ինքը բազմաթիւ առիթներ էր տալիս այդպէս կար-  
ծելու: Սերմը առում, բոլու ժառ է գառնում, մեռած  
ծուն՝ կենդանի արարած, ծուն՝ թրթուր, թրթուրը՝  
—կոկոն, կոկօնը թիթեռ,—ուրեմն շատ խախուտ է  
մեռած և կենդանի էակների սահմանագիծը, ուրեմն  
միանդամայն հնարաւոր է մէկ զրութիւնից գեպի  
միւսն անցնելը և աշխարհում շարունակ այդպէս  
էլ կատարւում է: Այսպէս էին կարծում մարդիկ և  
զրանից եղրակացնում, թէ չար ողին կարող է անց-

նել մի տեղից մի ուրիշ տեղ, կարող է բնակութիւն հաստատել մարդու մէջ և զանազան հիւանդութիւններ առաջացնել:

Բայց այդպիսի եղրակացութեան հետ միասին մարդիկ այն համոզմունքն էին կազմում, թէ կարելի է չար ոգու դէմ ստիպողական միջոցներ ձեռք առնել, թէ կարելի է նրան բնակեցնել այս կամ այն առարկալի մէջ: Հնդկաստանում փորձեր էին անում մարդու միջից տենդը հանելու և դորտին անցկացնելու: Տէլորի ասելով՝ այժմեան վայրենիները հիւանդի մի քանի կաթիլ արիւնը կաթեցնում են գորափի բերանը, որպէսզի հիւանդութիւնը նրան փոխուի:

Դերմանիալի խուլ անկիւններում մինչեւ այժմ էլ մնացել է այն հաւատալիքը, թէ երեք անդամ պատուելով ծառի շուրջը, կարելի է նրան տալ մարդկալին հիւանդութիւնը:

Բելգիայում հաւատում են, թէ ատամի ցաւը կարելի է հաղորդել մեխակին, եթէ մեխակը դնել ցաւող ատամի վրա և ապա ամրացնել ծառի մէջ:

Այժմ էլ Ռուսաստանի տղէտ գիւղացիները, տենդը սկսուելուն պէս, անցկացնում են ձեռնոցը, մէջը ցորենի հատիկներ գցում, ապա ալդ հատիկները ցանում են հողի մէջ և ոտներով արորել սկսում, ենթադրելով թէ այդպիսով արորում ոչնչացնում են հիւանդութիւնը:

Կայ մի աւելի տարօրինակ սովորութիւն: Հիւանդի մէզի մէզի մէջ եփում են երեք ձու և ապա դնում մրջնանոցի առաջ, հաւատացած լինելով, թէ մըր-

շիւնները կուտեն այդ ձուերը և զրա հետ միասին  
կ'ոչնչանայ տենդը:

Շատերն էլ հաւատացած են, թէ կարելի է  
հիւանդութիւնը փոխադրել մի որեւէ առարկայի  
վրա և ապա զրա միջոցով տև կամ այն անծնա-  
ւորութեանը:

Գերմանիայի խուլ անկիւններում շատ անգամ  
կտրում են հիւանդի մաղերն ու եղունդները և մի  
առանձին կապոց շինելով, զցում են փողոցի մէջ  
տեղ: Ով որ վերցրեց կապոցը, նա էլ կհիւանդանայ:

Խուսաստանում և առհասարակ մեր ժողովրդի  
մէջ այդ միևնոյն միջոցը դորժածւում է գորտնուկի  
վերաբերմամբ: Թելի վրա գորտնուկի թուի համե-  
մատ հանգույցներ են անում և փողոցի մէջ տեղ զցում.  
ով որ վերցրեց թելը, նրան էլ կանցնի գորտնուկը:

Ցան ունեցող հիւանդութիւնների ժամանակ  
մի փալասով սրբում են հիւանդի կաշու վրայի ցանը  
— (ո՞քան սարսափելի է...) — և փալասը դուրս զցում,  
ենթադրելով, թէ ով որ վերցնէ փալասը, նրան էլ  
կը փոխուի հիւանդութիւնը:<sup>1</sup>

Աստրախանի կալմիկներն էլ երբ տեսնում են,  
որ հիւանդի վրա ոչ մի գեղ չէ ազդում, և երբ  
«հերիծը» դալիս է այն եղրակացութեան, որ հի-  
ւանդութեան պատճառը չար ոգու աղդեցութիւնն  
է, այն ժամանակ կատարւում է մի յատուկ մէս  
չար ոգուն արտաքսելու համար:

<sup>1</sup> Տես իմ «Սիֆիլիս» և «Վարակիչ հիւանդութիւն-  
ներ» զրքոյկները:

Հրաւիրում են «պօպին», որը խմորից շինում է փոքրիկ խողեր, ծիեր, ալճեր, կապիկներ և ուրիշ կենդանիներ. շարում է զրանց հիւանդի զլխի վերելք, աղօթքներ է կարգում, երկար խօսում է խմորէ կենդանիների հետ, փոփոխում. է նրանց տեղերը, մերթ ընդ մերթ արտասանում է հիւանդի անունը և վերջապէս դուրս գալով վրանից, այդ կենդանիները շպրտում է այս ու այն կողմէ. Այդ միջոցը գործադրում են վարակիչ և վիրաբուժական հիւանդութիւնների ժամանակ:

Մարդը փորձով համոզուել է, որ շատ անգամ հիւանդոտ անդամը ոչնչացնելով կարելի է ազատուել հիւանդութիւնից. օրինակ՝ ցաւող ատամը քաշելով, մարդ ազատում է ատամի ցաւից:

Հէնց զրանից ել սնապաշտ մարդիկ դուրս են բերել այն եղրակացութիւնը, թէ մարմնի այս կամ այն անդամի վրա որոշ ազդեցութիւն դործ դնելով, կարելի է հեռացնել չար ողին:

Զ

Մարդկալին մտածողութեան այդպիսի հոսանքը հետզհետէ լայնացել, ընդզրկել է աւելի մեծ թւով երեսոյներ և ժամանակի ընթացքում որոշ փոփոխութիւնների է ենթարկուել զիտութեան նորանոր զիւտերի համեմատ:

Երբ հիւանդը քրտնելով առողջանում էր, զրանից մարդիկ դուրս էին բերում այն եղրակացութիւնը, որ ըրտինքը թէ բուժիչ և թէ վարակիչ լատկութիւններ ունի:

Մի քանի կենդանիներ, օրինակ շունը, մարմնի կամ քրտինքի հոտից կարողանում են զանազանել գաղաններին և մարդկանց, կարողանում են դանել նրանց հետքը: Մըջիւնները հոտոտելիքի շնորհիւ մանաչում են իրանց ցեղակիցներին ու թշնամիներին: Շատ կենդանիներ և վայրենի մարդիկ ոտքերի հետքով գտնում են այս կամ այն տեղը, այս կամ այն մարդուն կամ կենդանուն:

Ահա այդ բոլորը սնապաշտ մարդկանց առիթ է տուել եղրակացնելու, թէ մարդու քրտինքը կամ ոտքի հետքն ունենալով՝ կարելի է նրա վրա ցանկալի ձեռով ազդել:

Այդ միենոյն հողի վրա զարդացել են բոլոր աղքերի գուշակութիւնները, կախարդութիւնները և այլ սնապաշտ հաւատալիքները:

Մարդ արարածը սնապաշտութեան այդ պրիդմայով էր նայում իր վրա, ամբողջ աշխարհի վրա: Նա այդ միենոյն վերաբերմունքը ցոյց տուեց և դէպի կենդանիները:

Եթէ մարդու քաշութիւնը սրտից է կախուած, ուրեմն գալիի կամ արշի քաշութեան աղբիւրն էլ սիրտն է: Հենց դրանից եղրակացնում են, թէ մարդը կարող է մի առանձին քաշութիւն ստանալ, եթէ ուտէ իր թշնամու կամ սպանած դաղանի սիրտը:

Այդ բոլորի հիմքն այն միտքն է, թէ ամեն մի պակասորդ միշտ էլ կարելի է լրացնել: Այդ միտքը իր ոլժը պահպանել է նաև ներկայ բժշկականութեան մէջ: Այսպէս օրինակ կենսական զանազան հիւթերի պակասորդը լրացնելու համար փորձում

են ներսրսկումներ անելք ներկայումս փորձում են թոքախար բժշկել ոչ միայն օդով, այլև կենդանու մսից բամած հիւթով։<sup>1</sup>

Եթէ արեան մէջ պակասում է երկաթը, աշխատում են այդ պակասորդը լրացնել այս կամ այն ձեռով։

Ժամանակի ընթացքում առաջ են գալիս մարդկային զանազան երկւորականութիւններ, ինչպէս օրինակ՝ ես և իմ մասը, իմ երջանկութիւնը, իմ հոգին, վերջապէս՝ ես և իմ խօսքը։

Ժողովրդական երգերի ու հեքեաթների մէջ շատ անգամ բաղդը—երջանկութիւնը, թափառում է, զանազան ձևեր ընդունելով. նա իր տիրոջ նման տիրում է, ուրախանում է, աջողութեան ու փորձանքի է հանդիպում։ Նա մերթ բաժանում է իր տիրոջից, մերթ նորից միտնում։

Դրա նման մարդկային խօսքը—հնչիւնն էլ տուանծին էակի կերպարանք է ընդունում մնապաշտ ժողովրդի աչքում։ Այսպէս է օրինակ արծագանքը, որ պատասխանում է մարդկային ամեն մի կոչին, ամեն մի հնչիւնին։

Արծագանքը չափազանց խորհրդաւոր է թւում, որովհետեւ նա գոյութիւն ունի, բայց ֆիզիկապէս չէ աղդում մարդկանց վրա։ Հիւանդութիւնը հալ ու մաշ է անում մարդուն, երազը նոյնպէս որոշ

<sup>1</sup> Հիւանդութիւնները կենդանիների մարմնի զանազան մասերով բժշկելու ձգտումը վերջին 15 տարիների ընթացքում լուրջ տեղ է գրաւել և զիտական բժշկութեան մէջ։ Գա անդամաբուժութիւնն է (օրդանօթերապիա)։

զգացմունքներ է առաջացնում, իսկ արծագանքը դոլութիւն ունի միայն հեռուում, ինչոր անյախտ տեղում և ոչ մի տեսանելի կամ շօշափելի ազգեցութիւն չէ առաջացնում:

Բայց քանի որ սնապաշտ ժողովուրդը հիւանդութիւն, զժբաղդութիւն ու այլ երեսութներ վերագրում է ոգիների ազգեցութեանը, ուստի նրա կարծիքով արծագանքը, ձայնն էլ մի որևէ ոգու ազգեցութեան հետեւանքն է:

Մինչև այժմ էլ դեռ մնացել է այն հաւատալիքը, թէ «արծագանքը չար ոգու բացականչութիւնն է»:

Դրանից կարելի է եղրակացնել, թէ որքան մեծ ոլժ է ստանում ձայնը—իբրև չար ոգիների զէնք՝ մարդկանց վրա ազգելու համար:

### Է

Ահա այդպիսով ձայնը, խօսքը դառնում է մի զէնք, որով կարելի է ազգել մարդու վրա: Հէնց այդ պատճառով էլ մարդը աշխատում է պահպանել ձայնը դանազան վնասակար ազգեցութիւններից:

Դրա վրա է հիմնուած վայրենիների այն սովորութիւնը, որով նրանք զժուարանում են բաց անել իրանց անունը, վախենալով, թէ մէկը կարող է դողանալ այդ անունը և դրա հետ միասին երջանկութիւնը:

Եեւ մինչև այժմ գոյութիւն ունի այն հաւատալիքը, թէ խօսքը կարող է շօշափելի առարկայ դառնալ, կարող է զգալի հետեւանք ունենալ:

Դրա վրա է հիմնուած այն հաւատալիքը, թէ ամեն մի բարեացակամութիւն կամ անէծք կարող է իրականանալ:

Այդ հողի վրա է զարգացել նաև այն հաւատալիքը, թէ մարգկալին խօսքն էլ երեմն գերբնական ոլժ է ստանում և կարող է ազգել թէ մարգկանց, թէ կենդանիների և թէ անշունչ առարկաների վրա:

Դրանից լետոյ զարմանալի չէ, որ զանազան ազգերի մէջ գոյութիւն են ստացել բազմաթիւ լեզենդաններ, որոնք շօշափելի պատկերներով նկարագրում են խօսքի գորութիւնը:

Մի անդամ մայրը իր աղջկան ուղարկում է մօտիկ առուակից ջուր բերելու:

Աղջիկը առուակի մօտ տեսնում է թռչունների, գրաւելում է նրանց երգով և ուշանում:

Մայրը երկար սպասում է և վերջապէս անհամբերութիւնից ու բարկութիւնից դրգուած բացականչում է. «արեք տանէ նրան»:

Հաղիւ էր նա արտասանել այդ խօսքերը, երբ արեն ու լուսինը վար իջան իրանց տեղից և սկսեցին վիճել, թէ ով պէտք է տիրէ աղջկան:

Վերջապէս արեգակը զիջանում է և լուսինը տիրում է աղջկան, այդ պատճառով էլ նրա երեսին բժեր են գոյանում:

Ժողովրդական լեզենդան ալզպէս է բացատրում լուսնի բժերը, այն ինչ զիտութիւնը բոլորովին այլ բացատրութիւն է տալիս զբան:

<sup>1</sup> Տես Կ. Փլամարիոնի «Հանրամատչելի աստղագիտութիւնը»:

Առաջ բերածի նման լեզենդաներն ու աւանդութիւնները բաղմաղան կերպարանք են տալիս մարզկալին խօսքին. նա թռչունի, բաղի, արծիւի, պէս գերբնական, աստուածալին յատկութիւններունի և կարող է ամեն ինչ անել:

Վերեսում ասածից կարելի է եղրակացնել, որ խօսքը առ աշնակարգ տեղ պէտք է գրաւէր այն ոգիների շարքում, որոնցով լի է աշխարհը:

Եւ խսկապէս այդպէս էլ եղաւ: Խօսքը, լեզուն նշանաւոր դեր է խաղացել ոչ միայն հին ժամանակներում, այլ և բաղաքակրթութեան վերջին աստիճաններում:

Ո՞րքան մեծ է եղել նրա գերը քրիստոնէական վարդապետութիւնը արծարծելու խնդրում:

Ը

Քրիստոնէութիւնը հասկանալու համար նախապատրաստուած էին հին աշխարհի առաջաւոր ազգի՝ յոյների, նշանաւոր մտածողները, ինչպէս օրինակ Սոկրատէսն ու Պլատոնը: Միայն այդ մարդիկ կարող էին հասկանալ իրերի էութիւնը:

Բայց զրանք էլ իրանց աշխարհահայեացըով օտար ու անհասկանալի էին այն ժամանակուայ միշին ինտելիգենտների համար:

— Զարմանալի չէ, ասում է Բուշէ Լեկերկ, որ Քրիստոսի քարոզչութիւնը թշնամանքի հանդիպեց «Ս.ստծու ընտրեալ ժողովրդի»—հրէաների կողմից, որոնց «կոչումն» էր Միակ Ս.ստծու պատգամները տարածել: Զարմանալի չէ, որովհետեւ ամբոխը դեռ

չեր բարձրացել այն ժամանակ տիրապետող աշխարհայեցողութիւնից: Նա խկապէս չեր հասկանում Քրիստոսին. չեր հասկանում, երբ աստուածային Ուսուցիչը ի միջի ալլոց ասում էր. «Եղէք կատարեալ, ինչպէս որ ձեր երկնալին հալրն է կատարեալ»:

Եւ մարդիկ աղաւաղեցին Քրիստոսի վարդապետութեան իմաստը, անմիտ ծիսակատարութիւն դարձնելով նրան և ջնջելով «կենդանի խօսքը», ինչպէս որ տեսնում ենք այժմ շատ տեղերում:

Ի՞նչպիսի բարեփոխութիւն, ինչպիսի բարերար աղղեցութիւն պէտք է առաջացնէր քրիստոնէութիւնը, ընկնելով ամրոխալին անպատճաստ հողի վրա:

Զար և բարի ոգիների մասին գոյութիւն ունեցող հասկացողութիւնը նոր ձևակերպութիւն ստացաւ Աստծու և սատանայի անծնաւորութիւններով: Այս նոր հասկացողութեամբ տիեզերքը բաժանուած է երկու մասի. մէկի վրա տիրապետում է Աստուած, իսկ միւսի վրա—սատանան: Սակայն վերջինիս տիրապետութիւնը հետղհետէ աւելի ու աւելի պէտք է սահմանափակուի:

Չնայելով դրան, դեռ մինչև այժմ էլ ժողովրդի մէջ մնացել է սատանայի մասին եղած հասկացողութիւնը, որը տեղ է գտել նոյն խսկ աստուածարանական գրուածքներում: Այդուեղ օրինակ առւում է. «յախտնութիւններ լինում են Աստծու և դևերի կողմից»:

Միայն Աստուած ու դևերը, իրանց գերբնական ընդունակութիւնների շնորհիւ, կարող են նըշ-

տութեամբ իմանալ ապադան և այդ միենոյնը այս  
կամ այն ձեռվ յայտնել մարդկանց:

Այդպիսովք ըրիստոնէութիւնն էլքնդունեց հրաշք-  
ների գաղափարը. փոխուեց ձեր, բայց ոչ էութիւնը:

Քրիստոնէութիւնը, պահպանելով երազների,  
տեսիլների ու մարդարէութիւնների նշանակութիւնը,  
այդ բոլորը վերագրեց Աստուածային յայտնութեան  
և ոչ դեւերի:

Ի՞նչ պէտք է անէր նորադարձ ամբոխը, որ  
բոլորովին անպատճաստ էր. վերլուծող մտածողու-  
թեան, որ զեռ հաստատուն էր իր հին հաւատի մէջ:

Դեռ ամենահին կուլտուրական ազգերը բնու-  
թեան ոյժերը համախմբել էին առանձին աստուա-  
ծութիւնների շուրջը, զիսաւոր տեղը տալով կրակի  
ու լոյսի պաշտամունքին: Այդ լուսաւոր աստուա-  
ծութիւնները խմբուած էին արեգակի շուրջը, որ  
լոյսի և տաքութեան աստուածն էր, երկրային  
կեանքի աղբիւրը: Այդ աստուածները շատ անգամ  
պաշտպանում էին մարդուն բնութեան խաւար ու  
ահարկու ոյժերի գէմ:

Արեգակը բնութեան բոլոր երեսութների բնա-  
կան զեկավարն ու հրամայողն էր համարւում: Նա  
հեռու էր մարդկանցից, անմատչելի էր և այդ հան-  
գամանքը աւելի ևս ուժեղացնում էր նրա աղվե-  
ցութիւնն ու խորհրդաւորութիւնը:

Արեգակնային թէօրիան անհերքելի էր և այդ  
հանգամանքը կամաց-կամաց նախապատճեց այն  
ուղին, որով զարդացաւ միաստուածութեան զա-  
ղափարը:

Եւ իսկապէս, քրիստոնէութեան դարձած կռապաշտների խելքին ու սրտին զիւրամատչելի էր միակ, բարի Աստծու դաղափարը:

Սակայն այդ գաղափարը դեռ շաղկապուած էր խաւար ոյժերի, մութ հասկացողութիւնների հետ:

Քրիստոնէութեան շրջանում այդ «խաւար ոյժերը» ծեափօխուեցին մոլորեցնող դեի, սատանալի, Աստծուն ու մարդկանց թշնամի սուտ-Քրիստոսի անուններով:

Քրիստոնէական վարդապետութեան ազդեցութեան տակ հին աստուածները, երկրային թագաւորութիւնների տէրերը թուլանում, նսեմանում են միակ աստծու փայլի առաջ և ընկնում են սատանալի իշխանութեան տակ: Վերջինս զգալով իր ոյժը, փորձեր է անում Աստծու հետ կռուելու, նրա իշխանութիւնը խլելու:

Թէ

Թէ կլասիկական, հին դարերում և թէ քրիստոնէութեան շրջանում բաւական բնորոշ է զեերի, սատանալի մասին զոլութիւն ունեցող հասկացողութիւնը:

Հիւանդանալիս մարդը կարծում էր, թէ մարմնի մէջն է մտել իր հոգու թշնամին—չար ոգին: Այդ հաւատալիքը աւելի ևս տանջում էր նրան, զրգուելով նրա երևակայութիւնը և առաջացնելով սարսափելի նախազգացումներ:

Երկու տարբեր աշխարհահայեցողութիւնների —կռապաշտութեան և քրիստոնէութեան, միացումը

առաջացրեց մի միջին դրութիւն, որին եկեղեցու ս. հայրերը «Երկնաւատութիւն» անունը տուին:

Երկնաւատութեան գոյութիւնը շարունակուեց շատ երկար և էապէս դեռ մինչև օրս չէ վերացել:—Եկեղեցին, ասում է մի գիտնական, եռանդուն կերպով աշխատեց ոչնչացնել Երկնաւատութիւնը՝ թէ մերկացնող քարողներով, թէ կրօնական շարադրութիւններով, օրէնսդրութեամբ ու նզովքներով, բայց նա շարունակեց իր գոյութիւնը մասսամբ այն պատճառով, որ չափազանց աղքատ էին այն ժամանակուայ ուսուցման միջոցները:

Բացի դրանից չափազանց մեծ էին ս. հայրերի պահանջները: Նրանք հալածանը սկսեցին ամեն մի բանի, զուարճութիւնների, խաղերի, երգերի ու պարերի դեմ: Նրանց կարծիքով այդ բոլորը ստանալական դորձեր էին:

Քրիստոնէութիւնը չոչնչացրեց կռապաշտական հաւատալիքները: Այս վերջինները հիմք դարձան նոր աշխարհահայեցողութեամ: Բաւական է մի փոքրիկ վերլուծում, որպէսզի համողուենք այդ բանում:

Եւ իսկապէս. իւրաքանչիր աղգի, իւրաքանչիւր անհատի կուլառւրական զարգացումը բնորոշուում է նրանով, որ կեանքի առաջացրած նորանոր պահանջների ու սկզբունքների շնորհիւ հին աշխարհահայեցողութիւնը հետզհետէ լայնանում վերանորոգուում է:

Բայց այդ դէպքում հին սկզբունքները միանգամայն և ամբողջովին չեն վերանում կեանքից, այլ

նոր հոսանքի բնաւորութեան համեմատ մնում են կամ նրա հետ հաւասար աստիճանի վրա, կամ հետզդ հետէ յետ են մղում երկրորդական, երրորդական և ապա վերջին աստիճանի վրա: — Թէ սնապաշտառութիւնների և թէ առասպելների ու աւանդութիւնների միջոցով, ասում է Սպերանսկին, որոշ չափով արտայալտում են ժողովրդի յատկանիշները: Պարզ է իհարկէ, որ դրանց ամենազլիսաւոր արտայալտիչն է լեզուն:

Մարդ որբան խորն է ուսումնասիրում լեզուի հարցը, այնքան պարզում և որոշում է նրա նշանակութիւնը մարդկային գարգացման պատմութեան մէջ:

Լեզուն հոգու և մտքի բարձրութեան ամենալաւ արտայալտիչն է: «Ո՞ք ինքն մարդն է» — ասում է Բիւֆֆոնը:

Գիտութիւնն էլ խոստովանում է լեզուի մեծ նշանակութիւնը, ընդունելով այն փաստը, թէ առանց մշակուած լեզուի ծեերի՝ անհնարին է մտքի գարգացումը, թէ այդ երկուսը շաղկապուած են միմեանց հետ:

Գաղափարները կենդանի ծեեր են, որոնց միջոցով ժողովրդական ողին ներգործում է, ստեղծում է: Եւ իւրաքանչիւր ժամանակաշրջան ունի իր համապատասխան դաղափարները:

Ահա հէնց այդ պատճառով միշտ կարելի է որոշ հասկացողութիւն կաղմել մի որեւէ ժամանակաշրջանի մտաւոր կացութեան մասին, քննելով և վերլուծելով համապատասխան դաղափարները և նրանց գարգացումը:

Բայց այդ գէպօւմ պէտք է պահպանել մասնակի՝ այսպէս ասած շրջանալին զաղափարները ընդհանուր ժողովրդի գաղափարներից:

Մեր վարժունքը, մասամբ նոյն իսկ մեր բնաւորութիւնը, որոշող զաղափարները, շատ անգամ յառաջ են գալիս մասամբ հանգամանքների, մասսամբ էլ մարդկանց ներշնչումից: Ուրիշ խօսքով ասած՝ մենք զգում ենք այդ զաղափարները իրեւ մի հոգեկան ներշնչում:

Կան ժողովրդական բաղաթիւ հաւատալիքներ, որոնք կապուած են այդ երեսովթների հետ. օրինակ, «աչք տալը, սիրալին կախարդանքը, չար և բարի ոյժերի ներշնչումը», ևալլն:

Այդպիսի հաւատալիքները բնորոշ կերպով ցուց են տալիս, որ հոգեկան ազգեցութիւնը կամ ներշնչումը կարող է որոշ զգացողութիւն առաջցնել. ուրիշ խօսքով ասած՝ կարող է որոշ հետեւանք ունենալ և աղղել մեր վարժունքի վրա:

Շատ անգամ խօսքը իր մէջ պարունակում է մի առանձին ոյժ՝ հրաման:

Մեր կամ մէկ ուրիշի աղղու խօսքը դրդում է մեղ գործելու և նոյն իսկ որոշում է այդ գործունէութեան ուղղութիւնը: Այդպիսի խօսք ոչ միայն հնչում է մեր ականջին, այլ և այսպէս ասած՝ ապրում է մեր մէջ:

Բայց զժրախտաբար մեղանում շատ շատերը մոռանում են խօսքի նշանակութիւնը. չեն սովորում իրանց մալրենի լեզուն և նոյն իսկ արհամարհում են նրան:

Ամեն տեղ ժողովուրդը մի հետաքրքիր նիւթէ է ներկայացնում ուսումնասիրութեան համար: Նոյն իսկ նրա նախապաշարմունքները, անոտիապաշտութիւններն ու հաւատալիքները ունեն իրանց որոշ պատճառները, հետեւանքները և արժանի են ամենալուրջ ուշադրութեան:

Մտեք յետ ընկած բնակավայրերը, շփուէք ժողովրդի հետ և զուք կը տեսնէք, թէ որքան բազմաթիւ, որքան բազմազան նախապաշարմունքներ ունի նա: Ահա նմուշները.—Եթէ գիւղում ննչեցեալ լինի, ոչ ոք զլուխ չի լուանայ, վախենալով, թէ գուցէ հրեշտակը, որ ննչեցեալի պատճառով գիւղումն է, խփէ, նրան էլ մահացնէ:\*

Դատ տեղերում կնոշ զերեղմանը սովորականից մի արշին խոր են փորում, որովհետեւ հաւատացած են, թէ կինը խռովարար է, խօսք մանածող է, սատանալի հետքարեկամ է և մեռնելուց յետոյ էլ կարող է մարդկանց վնաս հասցնել: Եթէ մի ննչեցեալից յետոյ տնեցիներից հիւանդանում են, կարծում են, թէ իսկապէս ննչեցեալը զեռ մեռած չէ և տանեցիներից եօթը հոգի տանելու է իր հետ, մեռցնելու է: Այդ բանը որոշելու համար ննչեցեալի զերեղմանի վրա զարի են ցանում և ծին տանում մօտը. Եթէ ծին կերաւ դարին, դա ապալուց է, որ ննչեցեալը իսկապէս մեռած է, իսկ եթէ չկերաւ, դա նշան է, թէ մեռած չէ: Այս վերջին դէսլըում բաց են անում դերեղ-

\* Ե. Լալայեան «Վարանդա» եր. 184.

մանր, ննջեցեալի գլուխը չախչախում են կամ մեխ խփում զլխին ու սրտին... Ոմանք էլ ննջեցեալի սրտից մի կտոր կտրում և հիւանդին են տալիս, որ չրով ընդունէ և առողջանալ:

Այսպիսի նախապաշարմունք գոյութիւն ունի Վարանդալի գիւղերում: Բայց միւս գաւառներն էլ յետ չեն մնացել այդ հարցում: Շատերը հաւատացած են, որ եթէ հաւը աքաղաղի նման կտնչէ, տնեցիներից մէկը պէտք է մեռնէ. այդ չարիբի առաջն առնելու համար հաւը գուան շէճքում մորթում են:

Եթէ գիշերը աքաղաղը անժամանակ կանչէ, դա նշան է, որ մի չարիք պէտքէ դայ, մի փորձանք պիտի պատահի: Դրա առաջն առնելու համար կրակ են շպրտում դէպի հաւաբունը, որպէսզի չարը հաւերին գնալ: Եթէ աչ ականջը քոր դայ, միւս օրը լաւ եղանակ կլինի, իսկ եթէ ծախը քոր դայ՝ անծրե կը դայ: Աշ աչքի խաղալը աչողութեան նշան է, իսկ ծախ աչքի խաղալը ծախորդութեան նշան:

Ահա այդ և այդ տեսակ ուրիշ սնապաշտութիւններ կաշկանդել են մեր ժողովրդի մտաւ որ հորիզոնը:

Հարկաւոր է օր առաջ օգնութեան հասնել, քանդելով այդ շղթաները, վերացնելով այդպիսի անօգուտ, իսկ երբեմն նոյն իսկ վնասակար սնապաշտութիւններն ու նախապաշարմունքները:

Հարկաւոր է զործել յանուն ժողովրդի և ժողովրդի համար:

Ժ

Վերևում ասացինք, որ մարդկացին խօսքը շատ մեծ զեր է խաղում ընթացիկ կեանքում, շատ մեծ աղղեցութիւն ունի մարդկանց վարժունքի վրա:

Եւ ժամանակակիցք բժշկութիւնը գրանից գրրդուած աշխատում է գտնել, թէ ինչից է առաջ գալիս խօսքի բուժիչ դերը, որ այնքան մեծ նշանակութիւն ունի ժողովրդական բժշկութեան մէջ:

Ալլպիսի ուսումնասիրութեան շնորհիւ պարզաբանուում են ժողովրդական շատ ու շատ սնապաշտութիւններ:

Կախարդութեան պատմութիւնը ուսումնասիրող բոլոր հեղինակները լիշտատակում են թալիսմանների և խորհրդաւոր խօսքերով մարդկանց հմայելու մասին, որոնցով շատերը դառնում են անզգայդէսլի տանջանքները:

Դրանք նոյն իսկ ամենասարսափելի տանջաբների ժամանակ պահպանում են կատարեալ հանգարտութիւն և ոչ մի շարժումով, ոչ մի նշանով չեն արտայալառում, թէ ցաւ են զգում:

Ալժմ գիտական փորձերի շնորհիւ կարելի է ալդ երևոյթը ճիշտ կերպով բացատրել: Եւ իսկապէս, ներկայումս նոյնատեսակ փորձեր կարելի է կատարել հիպնոտիսմի միջոցաւ:

Եթէ թալիսման ունեցող միքանի մարդիկ բոլորովին չեն զգացել տանջանքներ, ալդ նրանից է, որ նրանք իսկապէս համոզուած են եղել, թէ ի-

բանց մօտի թալիսմանը գերբնական զօրութիւն  
ունի և այդ համոզմունքը նրանց անզգալ է դար-  
ձրել:

Ներշնչման պատճառները լինում են երբեմն  
ներքին, իսկ երբեմն էլ արտաքին՝ դրսից։ Այս վեր-  
շին գէպըում նրանք աննկատելի կերպով աղդում  
են մեր մտքի վրա։

Երբեմն էլ պատահում է, որ ներշնչումն իրա-  
գործւում է մեր կամքին հակառակ, նոյն իսկ այն  
դէպըում, երբ մեր խելքը շատ լաւ հասկանում է  
դրա ստութիւնն ու անհեթեթութիւնը։

Այդ առիթով Շարլ Ռիշէ զիտնականը կատա-  
րել է մի շարք չափազանց խրատական փորձեր։  
Այսպէս օրինակ, նա մի կնոջ ասում է.

— «Ահա ծեղ չափազանց դառը չուրը. փոր-  
ձեցէք քիչ խմել զրանից...»

— Ես զիտեմ, պատասխանում է կինը, որ  
չուրը դառը չէ։ Բայց նա մօտեցնում է շրթունք-  
ներին, իսկոյն սաստիկ զզուանքի նշաններ է ար-  
տալայտում։

Վերջապէս, երկու երեք ըոսկէ կանգնելուց  
յետոյ, կինը զիջանում է շրջապատղների թախան-  
ձանքին և խմում է չուրը, բայց ոչ առանց զզու-  
անքի։

— Ինչո՞ւ էք այդպէս զզում, ինչո՞ւ էք այդպիսի  
դժուարութեամբ խմում, հարցնում են կնոջից. չէ՞ որ  
դա սովորական չուր է։

— Այդ բոլոր ես զիտեմ, պատասխանում է  
կինը։ Բայց չեմ կարող ուրիշ կերպ վարուել...

Նոյնանման օրինակներ պատահում են շատ յանախ և սովորական կեանքում: Մի որևէ նեարդալին կասկածամիտ մարդու բաւական է ասել: «Թրթուրը վզիդ վրա ման է գալիս կամ գորար թռաւ ոտիդ» ևայն, որպէսզի նա երկիւղից կարձրի, բղաւէ:

Փորձնական հոգեբանութիւնը ալդպիսի փորձերի շնորհիւ դիտական ճանապարհով բացատրում է հիպնոսի շատ ու շատ զարմանալի հետեանքներ, որոնք յախնի են նաև ժողովրդական բժշկութեան մէջ: Շատ դէպքերում զրանց միջոցով են գործում կախարդները, վհուկերը և հէքիմները:

Հիպնոսի ազդեցութեան շնորհիւ կարելի է առաջացնել զգացողութեան որոշ փոփոխութիւններ: Օրինակ վիրաբուժ բժիշկը ասում է հիւանդին. «Ձեր ձեռքը կաթուածահար է եղել» և զրանից յետոյ առանց տանջանքներ պատճառելու սկսում է ծակծկել հիւանդի ձեռքը, դժուարին օպերացիաներ կատարել:

Այդ միւնոյն ձեռվ կարելի է ներշնչել, որ հիւանդը խինինը քաղցը շաքարի տեղ ընդունէ, հասարակ չուրը սառն օղիի կամ լիկեորի փոխարէն, ևայն:

Վերջապէս՝ հիպնոսի միջոցով կարելի է այնպէս անել, որ հիւանդը չը տեսնի իր աչքի առաջ գտնուած առարկան կամ ընդհակառակը տեսնի նրա միւս կողմի առարկաները:

Հիպնոսելու ձեւերը բաւական նման են այն ձեւերին, որ գործ են ածում կախարդանքի ժամանակ:

Ժամանակակից դիտութիւնը պարզել է մի շարք փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ որքան մեծ նշանակութիւն ունի ներշնչումը, թէ որքան սխալ հասկացողութիւնների տեղիք կարող է տալ նա, իբրև անհատի հոգեկան տրամադրութան վրա աղղող մի գործօն:

Ընդունելով այն փաստը, որ մարդկալին միտքը ձայնի, լոյսի, տաքութեան, ճառագալթների և ելեքտրականութեան նման էներգիայի մի տռանձին տեսակ է, լիշեալ դիտական ուղղութիւնը եկել է այն եղրակացութեան, թէ հնարաւոր է մէկ անհատի միտքը ներշնչել մէկ ուրիշին՝ տարածութեան վրա, առանց շօշափմանց իբրև ապացոյց բաւական է լիշել անթել հեռագիրը, առանց հաղորդիչների ելեքտրական լապտերը ևալլն:

Որքան որ տարբեր են մարդկալին մարի յատկութիւնները, նոյնքան տարբեր են և նրա կազմուածքի հիւանդութիւնները:

Երբեմն պատահում է, որ անհատը մի տեսակ ցնցում է զգում զլխում, որից յետոյ ինքնաղիտակցութիւնը հիմնովին փոխում է: Նա պահպանում է իր մտաւոր յատկութիւնները՝ իդէալները, դատողութիւնը, լիշողութիւնը, բայց այլևս չի զգում օրդանական կարիքներ՝ ոչ քաղց, ոչ ստամոքսի ժանրութիւն և ոչ էլ ցաւ:

Նա չի ցնցւում նոյն իսկ այն ժամանակ, երբ նրա միար ծակում են:

Երբ այդ տեսակ հիւանդներից մէկին բժիշկ Սոլիկն հարցրեց, թէ ի՞նչ է զգում, նա պատասխանեց. «Ես զգում եմ որ այլևս չեմ ապրում»:

Սոլիէն կարողացաւ նշտութեամբ որոշել այդ  
հիւանդի գանդի այն կէտը, որի ցնցումից յառաջա-  
չացել էր ալսպէս ասած գոլութեան զգացմունքի  
կորուստը:

Ուղեղային կենդրոնների այդ կէտը համապա-  
ասսխանում էր մարսողութեան գործարանների և  
մասնաւրապէս ստամոքսի նեարդային կենդրոններին:

### ԺԱ.

Նեարդային և հոգեկան հիւանդութիւնները,  
ինչպէս իրաւացի կերպով նկատում է Լեմանը,  
միշտ էլ մեծ գեր են խաղացել նախապաշարմունք-  
ների հարցում:

Հնագոյն պատմութիւնը ցոյց է տալիս, որ  
այդ երեսովները ամեն տեղ համարուել են մի գեր-  
բնական ոլժի՝ գեերի ու սատանայի ազգեցութեան  
հետեւանը:

Հին ձեռագրների մէջ, որտեղ որ պատահում է  
լիշտակութիւն սատանայի ազգեցութիւնից առա-  
չացած զլիսի կամ ճակատի հիւանդութեան մասին  
— այդ բոլորը պէտքէ վերագրել մեծ մասամբ հո-  
գեկան հիւանդութեան:

Օրինակ Աստուածաշնչի մէջ շատ տեղերում  
խօսւում է զիւահարութեան մասին. մի քանի գէպ-  
քերում նկարագրութիւնն այնքան նիշտ է, որ շատ  
հեշտութեամբ կարելի է իմանալ հիւանդութեան ձեր:

Հոգեկան և նեարդային հիւանդութիւնների  
շարքում խստերիան զլիսաւոր տեղն է բռնում: <sup>1</sup>

<sup>1</sup> Տես իմ «Մեր նեարդերը» գրքը կը:

իստերիալի էութիւնը և նրա իսկական պատճառները մինչեւ այժմս պարզաբանուած չեն. այդ հիւանդութեան մշտական նշաններն էլ ցոյց տալն հնարաւոր չեն, որովհետեւ նրանք չափագանց բազմազան ու փոփոխական են և կախում ունեն բազմաթիւ ազգեցութիւններից:

Նախապաշարմունքը պարզաբանելու համար անհրաժեշտ է իմիջի այլոց բացատրել իստերիալի էութիւնն ու պատճառները:

Իստերիալի դրեթէ բոլոր դէպքերում մենք տեսնում ենք, որ նա ժառանդական ծագում ունի, ալսինքն հիւանդները իրանց ծնողներից են ժառանդել քայլքայուած նեարդալին համակարգութիւն:

Դեռ մանկական հասակում արտայայտում են հիւանդութանդականութեան նշանները—չղածղութիւններ, զլխու սասակիկ ցաւեր, դիւրազրզիուրնաւորութիւն ևայլն:

Հասկանալի է, իհարկէ, որ հիւանդութիւնն արտայայտուելու համար հարկաւոր է մի առիթ՝ ֆիզիքական կամ բարոյական ցնցում:

Հոգեկան ամեն տեսակ զրգիւներ՝ հոգս, երկիւղ, սարսափ, բարկութիւն կարող են նեարդալին հիւանդութեան շարժառիթ դառնալ:

Զանաղան տեսակ ցնցումների ժամանակ՝—ինչպէս օրինակ վար ընկնելը, դժբախտ դէպքերը, երկաթուղու վրա պատահած ընդհարումները և ալն—հաւանականօրէն մեծ դեր խաղում է հոգեկան ցնցումը:

Երբեմն ամենաչնչին առիթն անդամ բաւական է,  
որպէսզի խաւերիկական հիւանդութիւն առաջանալ:

Իստերիկական համաճարակը ժամանակ առ  
ժամանակ նպաստաւոր հանդամանքների շնորհիւ  
շատ մեծ ժաւալ է ստանում, ինչպէս այդ պատա-  
հեց միջին դարերում:

Այժմ նա գոյութիւն ունի միայն հեռաւոր  
երկրներում, ուր զօրեղ է մնապաշտութիւնը և վառ  
է կրօնական երեակայութիւնը:

Մօտ երեսուն տարի առաջ այսպիսի համա-  
ճարակ պատահեց Խտալիալի լեռնալին գիւղերում,  
որտեղ աղգարնակութիւնը աղքատ է, տղէտ, անա-  
պաշտ և առհասարակ ալլասեռուած է ֆիղիքապէս  
և բարոյապէս: Դեր են խաղում նաև սիֆիլիսն և  
արբեցողութիւնը:

Ահա այդ տեսակ համաճարակներից մէկը:

Մի աղջիկ սկսեց ուշաթափուել սկզբում մենակ  
ժամանակ, իսկ յետոյ նաև ուրիշների ներկայու-  
թեամբ: Ուշագնացութիւնն այնքան վարակիչ էր  
նախարձագրուած հարեանների համար, որ շատ  
շուտով նրանք էլ հիւանդացան:

Այդ երեսոյթը ամենքի վրա սարսափ աղղեց:  
Տարածուեց այն կարծիքը, թէ դա կախարդական  
դիւահարութեան հետեանը է:

Միջամտեցին քահանաները, սկսեցին հանդի-  
սաւոր ծէսեր կատարել հիւանդութիւնը բժշկելու  
համար, բայց ապարդիւն:

Դրութիւնը հետզհետէ աւելի ու աւելի վա-  
տանում էր, հիւանդների թիւը աւելանում էր,

մինչեւ որ ոստիկանութիւնը առանձնացրեց հիւանդաներին, հեռացրեց քահանաներին և եռանդուն միջոցներ ձեռք առաւ հասարակութեան հանգստացնելու համար:

Այդպիսի համաճարակների ժամանակ վարակման նախատրամզրող պատճառ լինում է սնապաշտ երկիւղը:

Զարգացած, խելացի հասարակութեան մէջ այդպիսի դէպքերն անհնարին են: Եթէ մէկը ուշաթափւում է, զա համարում են մի հիւանդութիւն և ոչ գերի ուսատանաների ազդեցութեան հետեանք:

Բայց սնապաշտ երկրներում, որտեղ դեռ հաւատում են դիւահարութեան, ամեն մի այդպիսի երկոյթ սարսափ է ազդում և հէնց զրանով էլ սասակացնում հիւանդանալու նախատրամազրութիւնը:

Հիւանդութեան տարածուելը աւելի ևս ուժեղանում է նրանով, որ կաթոլիկները իրանց սովորութեան համեմատ հիւանդներին կանդնեցնում են եկեղեցում և բանազրանքի ենթարկում:

Փորձը ցոյց է տալիս, որ այդպիսի դէպքերում աւելի զրգուող հետեանք է ստացւում, քան թէ հանգստացնող:

Հիւանդութեան պատճառը հոգեկան մի որևէ ցնցումն է լինում. այդ պատճառով էլ նրա նշանները նման են լինում հոգեկան—նեարդային հիւանդութեան նշաններին:

Այդպիսի հիւանդները կորցնում են զգացողութիւնը: Թուլանում է զլխաւորապէս ըմբռնողութիւնը:

Հէնց այդ պատճառով պէտք է ալդպիսի հիւանդների իւրաքանչիւր զգացմունքը առանձին քննութեան ենթարկել, որպէսզի կարելի լինի առաջացած փոփոխութիւնների մասին մի ընդհանուր գաղափար կազմել:

Խստերիալի մանրամասն բացարութիւնը ինարկէ դուրս է մեր նպատակից: Մենք նրանով կը զբաղուենք այն չափով, ինչ չափով որ նա կապունի սնապաշտութեան հետ:

Շօշափման թուլանալը արտայալում է անէստեղիան ծեռով, որը լինում է ընդհանուր կամ մասնակի, այսինքն բռնում է կաշու միառանձին մասը կամ տարածւում է ամբողջ մարմնի վրա:

Ընդհանուր անէստեղիան էլ կարող է լինել լրիւ կամ ոչ լրիւ: Առաջին դէպքում որքան էլ ուժեղ լինեն շօշափման զրգիւները, այսուամենակնիւ մարդ ոչինչ չի զգում: Երկրորդ դէպքում շօշափման զգացողութիւնը թուլանում է, բայց ոչ բոլորովին անհետանում:

Մասնակի անէստեղիան էլ ունի զանազան ձեւակերպութիւններ, օրինակ կարող է ոչնչանալ ցաւի զգացողութիւնը, այն ինչ բոլոր միւս դէպքերում նա կը կատարէ իր դերը: Այդ երեսոյթը կոչւում է անալգեղիա:

Հիւանդը սովորաբար չի նկատում իր զգացողութեան թերութիւնը, որովհետեւ դա նրան ոչ մի անյարմարտւթիւն չէ պատճառում և փոխարինւում է ուրիշ զգացողութիւններով: Օրինակ

անէստեղիա հիւանդութիւնը ունեցող կինը կարող է լաւ դերձակունի լինել, թէև ոչինչ չի զգայ ասեղը շօշափելիս և շարունակ ստիպուած կը լինի աչքով հետեւել աշխատանքին:

Անէստեղիան կարող է զանազան չափով տարածուած լինել մարմնի զանազան մտսերում: Երբեմն նա տարածուած է լինում մարմնի կէս մասում աչ կամ ձախ. երբեմն էլ մանը կզզիների ձեռով ցրուած է լինում կաշու զանազան կողմերում:

Մկանային զգացողութիւնն էլ կարող է անհետանալ նիշտ այնպէս, ինչպէս որ անհետանում է կաշու զգացողութիւնը: Հիւանդը չի զգում մրկաններին հասցրած հարուածներ ու ծանրութիւն, չի զգում յողնածութիւն: Բայց դրանից նու անդիտակցօրէն է կատարում իր կամաւոր շարժումները, իսկ ամենաբարդ և նուրբ շարժումները կատարուում են միայն տեսողութեան հակողութեամբ:

Այդպիսի դրութեան հետ երբեմն միացած է լինում մարմնի այս կամ այն անդամի կաթուածահար լինելը: Այդ դէպքում հիւանդը բոլորովին չի կարողանում շարժել իր անդամը, մինչև որ չը նայէ նրա վրա:

Դրա հետեւանքը լինում է այն երեսյթը, որ հիւանդը անկողնու մէջ «կորցնում է իր ոտը», այսինքն բոլորովին չի զգում, թէ ոտ ունի, որովհետեւ նրանից չի ստանում ոչ մկանային և ոչ էլ կաշուալին զգացողութիւն:

Ճաշակելիքը, հոտոտելիքը և տեսողութիւնը նոյնպէս կարող են թուլանալ մարմնի միայն մէկ կող-

մում կամ երկու կողմում միասին։ Օրինակ նա-  
շակելիքը լեզուի մի կողմում կարող է ոչնչանալ,  
իսկ միւս կողմում մնալ։ ականջներից մէկը կարող  
է խլանալ, կամ մէկ աչքը կուրանալ ևալ:

Այդ բոլոր երեսովմները, ինչպէս և բոլոր իս-  
տերիկական տանջանքերը արտայայտում կամ ան-  
հետանում են յանկարծակի կերպով, առանց մի որ-  
ևէ նկատելի առիթի։ Այդպիսի խանդարումները,  
մի քանի օրգանների գործունէութեան ընդունակու-  
թեան կորուստը, ժամանակաւոր է և նրա տեղը գրլ-  
խի ուղեղի մէջն է։

Անէստեղիալի դանազան ձեւերի հետ միասին  
պատահում է նաև զիպերալգեզիա, ալսինքն ցաւի  
ամենանուրը զգացողութիւնը, որը կարող է նկա-  
տուել կաշու դանազան մասերում անէստեղիական  
բաժինների հետ խառը։

Այդ գէպքում հիւանդը սաստիկ ցաւ է զգում,  
որը տանջում է նրան անդադար կամ արտայայտ-  
ում է միայն շարժումների ժամանակ։ Շատ ան-  
գամ ցաւերը անհետանում են նոյն արագութեամբ,  
ինչ արագութեամբ որ երեացել են։ Հէնց ալդպիսի  
գէպքերից էլ օգտում են «հրաշագործները», զրա-  
նից քաղում են իրանց փառքի պսակները։

Իստերիալի ամենագլխաւոր նշաններից մէկը  
չղածգութիւնն է, որը պատահում է հիւանդների  
կէս մասին, կանանց չորս անդամ աւել քան տղա-  
մարդկանց։

Դրա համար իբրև առիթ ժառայում է սովո-  
րաբար հոգեկան մի որևէ ցնցում։ Հիւանդների մի

քանիսի ուշագնացութեան համար անհրաժեշտ է աւելի ուժեղ առիթ, քան այն, որից առաջ է եկել հիւանդութիւնը: Սակայն ուշագնացութիւնը կրրկնուելու համար ամենաչնչին դէպքերն անգամ բաւական են:

Ուշագնացութիւնից առաջ հիւանդի հոգեկան զրութիւնը փոխւում է. նա անհանդստանում է, մենակութիւն է որոնում, առանց պատճառի ծիծաղում է կամ լաց է լինում: Ամբողջ մարմինը ցաւում է, վիզը և կուրծքը ճնշւում են. հիւանդին թւում է թէ մարմնի մի մասից կտրուել է հաւի ծուի մեծութեան մի գնդակ, դորւում է ստամոքսի վրայով, հասնում է միչե կոկորզը և խեղդել աշխատում:

Վերջապէս սկսւում է ուշագնացութիւնը: Մարմինը երկարանում և կարճանում է, վիզը ուռչում է, երակները լայնանում են և շնչառութիւնը ընդհատում: Յետոյ հնչում է բարձր ճիչ և սկլուսում են ջղածղութիւնները, մարմնի անդամների վայրենի շարժումները:

Ուշագնացութիւնից յետոյ հիւանդը մի որոշ ժամանակ պառկում է թմրած դրութեան մէջ, զառանցում է և վերջապէս արթնում է առանց մի որեւէ բան լիշելու պատահածի մասին: Այդ բոլորը շարունակում է քսան րոպէից մինչեւ մի քանի ժամ և իւրաքանչիւր անգամ կարող է տարրեր ձեւեր ընդունել:

Եթէ անէստեզիան տարածուած է կաշուի միայն մի փոքր և սահանափակ շրջանում, այն ժա-

մանակ խանդարումները այնքան նկատելի կերպով չեն արտայալտում:

Բոլորովին այլ կերպ է լինում, երբ մի որևէ զգացմունք ամրողապէս անհետանում է: Օրինակ. խստերիկական կուրութեան ժամանակ աչքերը առողջ են լինում, բայց չի դործում ուղեղի այն շրջանը, որի շնորհիւ տեսողական պատկերները անցնում են զիտակցութեան: Հէնց դրա պատճառով այդպիսի կոյքը ոչ միայն չի տեսնում, այլ և անկարող է լինում վերարտադրել տեսողական պատկերները: Այդ միենոլնը պատահում է նաև միւս զգացմունքների վերաբերմամբ:

Ըմբռնողութեան և լիշողութեան թուլանալը առաջնում է, ինարկէ, հողեկան որոշ փոփոխութիւններ: Խստերեկայով հիւանդ կինը կարծես ընկնում է մանկական դրութեան մէջ, երբ թոյլ է լինում զիտակցութեան ոյժը և այդ պատճառով անհատը հեշտութեամբ է ենթարկում ներշնչման:

Բոլոր ուսումնասիրողներն էլ խոստովանում են, որ խստերիկայով հիւանդ անհատների բնաւորութեան մէջ կայ մի ինչ որ մանկական յատկութիւն, որ նրանք շատ դիւրազգաց են և այն:

Խստերեկա հիւանդութիւն ունեցողներն այնքան շուտ են ենթարկում ներշնչման, որ մի պատահական խօսքն անգամ կարող է դառնալ նրանց մտքերի զեկավար, նրանց զառանցանքի առարկայ:

Դրանք սաստիկ վրդովւում են նոյն խոկ ամենադատարկ պատճառներից, շարունակ մտածում են

իրանց մասին և ամեն բանի վրա նայում են իրանց եսական շահերի տեսակէտից:

Այդպիսի հիւանդները մեծ մասամբ եսասէրներ են լինում, և դատարկ բաների լետեից ընկնողներ: Դրանց վերաբերմամբ շատ մեծ զեր է խաղում ալսպէս ասած՝ «ինքնաներշնչումը»:

### ԺԲ

Մեծ իստիրիան կամ ուրիշ խօսքով ասած՝ էպի-լեպսիան, ինչպէս նկատում են մի քանի դիտնա-կաններ, հասարակ իստերիալի ուժեղ տեսակն է, որ տարբերում է առաջինից իր բարդութեամբ ու աեռղականութեամբ:

Իստերիկական մեծ ուշագնացութիւնը առաջ է դալիս հոգեկան մի որեւէ ցնցումից:

Հիւանդը իրան վատ է զգում, չի կարողանում ոչինչ անել, ուշագրութիւն չի դարձնում շրջապա-տողների խորհուրդների վրա:

Անցեալի յիշողութիւնները մի առանձին պար-զութեամբ առաջ են դալիս և զրաւում ամբողջ ու-շաղրութիւնը:

Հիւանդը դառնում է մռայլ, դիւրազրդիւ, ապա սկսում է զառանցանքը: Նրա աչքին երկում են ամեն տեսակ զաղաններ՝ կատուներ, մկներ, սար-դեր, որոնք մերթ երկում են, մերթ անհետա-նում:

Այդպիսի տեսիլներից տանջուելով, հիւանդը կորցնում է իր հանգստութիւնը. նա յանկարծ վեր է թռչում և վալրենի ճիչ արձակելով, դուրս փախ-

չում՝ առանց վախենալու ցրտից, առանց ամաչելու. իր մարմնի մերկութիւնից:

Յանկարծակի սկսում է անդամների թուլութիւն, մարսողութիւնը խանգարւում է, թուրք առատութեամբ հոսում և սիրտը արագ-արագ բարախում:

Երբեմն այդպիսի զրութիւնը տեսում է մի քանի օր, վերջապէս սկսում է նաև ցաւ և հիւանդը զգում է, որ «իստերիկական գնդակը» բարձրանում է ստամոքսից դէպի կոկորդը և խեղդողական ժանր զգացմունքներ է առաջացնում:

Վերջապէս սկսում է ուշագնացութիւնը. հիւանդի աչքերը մթնում են, ականջներում աղմուկ բարձրանում և գիտակցութիւնը նսեմանում:

Մի քանի ուժգին շարժումներից յետոյ մարմինը կարծես սառչում է և մի արտասովոր զիրք ընդունում: Միայն ծեռքը, լեզուն կամ մի անդամը դանդաղ շարժումներ են կատարում. վերջապէս այդ էլ զաղարում է և մարմինը կատարեալ անշարժութեան է մատնում:

Անդամները սկսում են ցնցողական, ծալւող և բացւող շարժումներ կատարել՝ իւրաքանչիւր վայրկեանում մօտ չորս անդամ:

Դեռ հինգ րոպէ չանցած բոլոր մկանները թուլանում են և մարմինը մնում է անշարժ ու անկենդան:

Մի քանի րոպէ անցնելուց յետոյ մարմինը կատարում է մի քանի կլոունական շարժումներ, ինչպէս ցիրկում, ընդունում է արտասովոր զիրք և վեր-

չապէս ուժեղ կերպով ցնցում է այս կամ այն անդամք: Ալդ բոլորից լետոյ հիւանդը նորից ընկնում է անշարժութեան մէջ, որպէսզի նորից կրկնէ նոյն խաղը:

Հիւանդը երբեմն այդ շարժումների հետ վայրենի նիչ է արծակում, անկանոն կերպով թափ է տալիս ծեռքերը, կարծես պաշտպանւում է աներեւովթ թշնամուց:

Նա ապրում է մի ինչ որ ֆանտաստիկական աշխարհում, քիչ է խօսում կամ բոլորովին չի խօսում: Սակայն նրա մի քանի հետեւողական շարժումներից կարելի է եղրակացնել, թէ նրա երեակալութիւնն ինչով է զբաղուած, թէ ինչ զրութեան մէջ է:

Ինդհանուր օրէնք կարելի է համարել այն փաստը, որ զառանցանքն ու մարմնի համապատասխան դիրք ընդունելը միշտ կապուած են լինում այն գէպքի հետ, որից առաջ է եկել ուշագնացութիւնը:

Հիւանդութեան այդ երեք շրջանները սովորաբար տեսում են մէկ քառորդից մինչև կէս ժամ, որից լետոյ հիւանդը կամաց-կամաց ընդունում է իր նախկին նորմալ դրութիւնը:

Հիւանդութեան այդ և ուրիշ ծեռերը շատ մեծ դեր են խաղում սնապաշտութեան հարցում:

Ալդ բոլորը վերագրում են սատանայի աղդեցութեան և կախարդութեան: Հին ժամանակներում ալդպէս մտածում էին նոյնիսկ կրթուած մարդիկ: Իբրև մի պերճախօս ապացուց բաւական է վերցնել լայտնի Մարտին Լիւտերի կեանքը:

Կրօնական մեծ շարժման ալդ հոչակաւոր գործիչը իր ամրողը կեանքում չէր կարողանում աղաւուել նախապաշարմունքներից:

Անձանօթ լինելով բնական գիտութիւններին, նա չէր կարողանում հասկանալ ու բացատրել իր շուրջը կատարւող շատ երևոյթներ:

Այդ գէպքում նա ընկնում էր միենոյն սխալանքի մէջ, որպիսին կատարում են մարդիկ, երբուզում են բացատրել չուսումնասիրած ու չպարզած երևոյթները:

Նա իր ժամանակակից բոլոր քաղաքական, հասարակական և ֆիզիքական երևոյթներին հոգեբանական բացատրութիւն էր տալիս, բայց այդ բոլորի մէջ էլ տեսնում էր արտաքին ոչքի աղղեցութիւնը:

Մի անգամ սաստիկ փոթորկի ժամանակ Լիւտերն ասում է.

— Դա սատանալի գործն է. առհասարակ քածին չար կամ բարի ողիների գործն է. լսեցէք, թէ ինչպէս է փըւում, ինչպէս է աղմկում սատանան:

Լիւտերը կարծում էր, թէ բոլոր կաղերը, կոյրերն ու անգամալոյթները սատանալի աղղեցութեան տակ են: Նա տղէտ էր համարում այն մարդկանց, որոնք աշխատում էին բժշկել այդ հիւանդութիւնները. տղէտ այն պատճառով, որ չէին հասկանում սատանալի իշխանութիւնը:

Մի անգամ նա հրամալեց զեար զցել մի ապուշի, որը տանջուում էր էպիլեպսիա հիւանդութիւնից: Իր

վարժունքը Լիւտերը բացատրում էր նրանով, թէ  
ապօշշութիւնը սատանայական զործ է:

Նա ինքը ենթակալ էր չզային ցնցումների և  
այդ բանը վերադրում էր սատանայի աղղեցութեան:

Դէպի հռոմ ճանապարհորդելիս—27 տարեկան  
հասակում—Լիւտերը տեսողութեան ու լսողութեան  
գալլիւցինացիա ունէր. նրա զլուխը պտոյտ էր գա-  
լիս, նա տանջում էր այդ հիւանդութիւնից:

Իր նամակներից մէկում նա զրում է. «Գլխումս  
այնպիսի խշոց, այնպիսի աղմուկ է տիրում, որ  
կարծես քամի է փչում. իհարկէ, այդ բոլորը սա-  
տանայի զործն է»:

Մի ուրիշ նամակում զրում է. «Հէնց որ սկսում  
եմ աշխատել, զլխումս սկսում է աղմուկ, խշոց  
ու դղրդոց, սատանան եկաւ ինձ մօտ, աղղեց ինձ  
վրա, անկողին զցեց և ապա ստիպեց ինձ տեսնել  
նրան մարդկային կերպարանքով: Ես ուշաթափ-  
ում եմ»:

—Ես ենթադրում եմ, շարունակում է Լիւ-  
տերը, որ իմ հիւանդութեան պատճառը ծերացած  
հասակը, երկարամեալ աշխատանքը և մշտական  
լարուած մտածողութիւնն է: Բայց հիւանդութեանս  
զլխաւոր լանցաւորը սատանան է: Եթէ այդ  
պէս է, այն ժամանակ աշխարհումս չըկայ մի մի-  
ջոց, որ կարողանար բժշկել ինձ»:

Լիւտերը երբ Առւզսրուրդի ամրոցում մեկու-  
սացած կեանք էր վարում, չափազանց լարուած

<sup>1</sup> Տես իմ «Հիւանդ և առողջ երեխայի ողին»:

չղալին դրութեան մէջ էր: Նրա աչքին շարունակ սատանաներ էին երեսում. մի անգամ էլ նա զայրովթից դրդուած՝ թանաքամանն է շպրտում սատանալի երեսին: Մինչև այժմ էլ գեռ երեսում է թանաքի բիծը Լիւտերի ապրած սենեակի պատին:

Լիւտերի այդպիսի յատկութիւնների պատճառը դիսի ուղեղի հիւանդութիւնն էր և դրանից առաջացած տեսողութեան ու լսողութեան զալիւցինացիան:

Միայն տղիտութիւնն ու սնապաշտութիւնն էր պատճառը, որ այդ բոլորը վերագրում էին սատանալի աղղեցութեան:

Այժմ մի քիչ մանրամասն խօսենք սատանալի և նրա աղղեցութեան մասին:

#### ԺԴ

Բոլոր մոլորութիւններից, որոնք երբ և իցէ ծանրացել են մարդկութեան վղին, կախարդութեան պատմութիւնը ամենախրատականն ու ամենապերճախօսն է, որ ցոյց է տալիս թէ ինչպէս առողջ խելքն ու մարդկալին զգացմունքը յաղթում է տղիտութեան ու վայրենութեան:

Այդ յաղթանակը մարդկութիւնը ձեռք է բերել անմահ զիտութեան շնորհիւ:

Միայն տասնիններորդ դարի զիտութեանն աջողուեց երկրի երեսից բնաշինչ անել մարդկալին տղիտութեան այդ մոլորութիւնը, վերացնել սատանալական նախապաշարմունքների խաւարը և հանգնել ամօթարեր խարոյկները:

Կախարդութեան և սատանալին հաւատալը գոյութիւն է ունեցել ամեն ժամանակ. նա անհետացած չէ և այժմ: Սակայն միջին դարերում մարդկութիւնը այդ հաւատը դարձրեց մի ամբողջ սիստեմ, աշխարհահայեցողութիւն, որը իշխում էր հասարակութեան բոլոր դասակարգերի վրա:

Միջնադարեան մարդկանց կարծիքով Աստուած և սատանան զբեթէ հաւասար ոյժերով մրցում են իրար դէմ, աշխատելով ձեռք բերել իշխանութիւն ամբողջ մարդկութեան վրա:

Աստուած կարող էր ոչնչացնել սատանալին և նրա ոյժը, բայց Նա պահպանում է նրան, լժողնում է աշխարհում գործելու, մոլորեցնել և փչացնել մարդկութիւնը, որպէս զի մարդիկ, այդ մոլորութեանը դիմադրելով, արժանանան փրկութեան:

Ինչպէս որ հին ժամանակներում չարի և բարու սկզբունքը մարմնացած էր Որմիզդի և Անրիմանի մէջ, այդպէս էլ միջին դարերում մարդկութիւնը մեղքի և փրկութեան մաքառումը սատանալին ու Աստծուն էր վերագրում:

Այդ երկու ոյժերը հաւասար հիմունքներով են առաջ մղում մաքառումք. Աստուած ունի իր հրեշտակներն ու երկնալին ոյժերը. սատանան էլ ունի բաղմաթիւ դեեր ու խաւար ոյժեր, որոնք գործում են իրանց իշխանաւորների հրամանով:

Այդ իշխանաւորներից իւրաքանչիւրն ունի իր յատուկ գործունէութիւնը աշխարհում՝ մարդկանց մէջ, և այդ գործունէութիւնը առաջ է մղում իր ստորադրեալ դեերի միջոցով, որոնք դէմ առ դէմ

կուռում են հրեշտակների ու երկնային ոլժերի հետ:

Թէ բարիքը և թէ չարիքը կարող են մտնել  
հոգու խորքը, արմատանալ այնտեղ, իշխել նրա վրա  
և գործել նրա միջոցով:

Միայն մահը կարող է ազատել մարդուն սա-  
տանայի ձեռքից, եթէ նա մինչև մահ չէ կարողա-  
ցել ազատուել յանուն Աստծու:

Այդ գէպքում հոգին կորչում է. նրա համար  
չկայ փրկութիւն:

Հասկանալի է, իհարկէ, որ այդպիսի պայմաննե-  
րում, այդպիսի հաւատ ունեցող մարդկանցից ոչ  
ոք չէր կարող վստահ լինել իր բաղդի վրա:

Նրա հոգին միշտ երկիւղի մէջ պէտք է լինէր,  
թէ այս կամ այն պատճառով հոգին կարող է զլր-  
կուել պահապան հրեշտակի հովանաւորութիւնից և  
ընկնել կախարդիչ սատանայի իշխանութեան տակ:

Մարդու հոգու մէջ մտնելու համար սատանան  
բացարձակ չի գործում, այլ խորամանկութեամբ,  
մոլորութեամբ ու կախարդական հնարներով:

Երկնքից ստացած իր զօրութեան շնորհիւ նա  
կարող է զանազան ձեւ ու տեսք ընդունել, զանազան  
նանապարհներ ընտրել մարդուն մոլորեցնելու համար:

Նա յալտնուում է շքեղազարդ ասպետի, վար-  
դապետի, գեղեցիկ կնոջ տեսքով. նա կարող է ըն-  
դունել ինչ տեսք որ ուզէ մարդկանց մոլորեցնելու  
համար:

Նա մտնում է ամեն տեղ՝ հարուստ ամրոցները,  
աղքատ խրճիթները, անտառներն ու փողոցները և  
ամեն տեղ էլ զոհեր է որոնում:

Նա աշխատում է մոլորեցնել մարդուն և խլել նրան Աստծու ձեռքից:

Եւ երբ այդ բանը աշողւում է, նա հաստատում է իր իշխանութիւնը մարդու վրա առանձին պայմանագրութեամբ, որ ստորագրում է արիւնով: Բայցի դրանից նա մարդու մարմնի վրա առանձին դրոշմ է խփում իր նանկերով՝ «սատանայի նշան»—Stigma diavoli:

Այդ բոլորից յետոյ մարդը դառնում է սատանայի կատարեալ ստրուկը, պարտաւորւում է հոգատակուել նրան, կատարել նրա հրամանները և իրագործել նրա ներշնչած բոլոր ոճիրները:

Սատանայի համար ամենից հեշտն է կանանց վրա իշխանութիւն ձեռք բերել, այդ պատճառով էլ ամենից շատ կանալը են զոհ դառնում նրա խարդախութեանը:

Նա խորամանկ նառերով մխիթարում է կնոջը, եթէ նա վշտացած է. փող է խոստանում է, եթէ կարիք ունի և այդպիսով կամաց կամաց վերցնում է նրան իր աղղեցութեան տակ:

Իսկ եթէ կինը զիմադրում է, այն ժամանակ սատանան սկսում է խստութիւն ու սպառնալիք գործադրել, մինչեւ որ հասնի իր նպատակին:

Անձնատուր եղած կանանց կախարդների միջոցով սատանան ցանում է իր որոմները, առաջացնում է փորձանքներ ու չարիքներ:

Նա սովորեցնում է կախարդ կնոջը հիւանդութիւններ ու անբերբիութիւն տարածել, կոտորել մարդկանց ու անասուններին, ոչնչացնել քրիստոն-

եաների մարմինն ու հողին, առաջացնել փոթորիկ, վնասել ցանքսերին ևալն ևալն:

Կախարդ կինը աշխատում է մարդկանց մէջ տարածել վէճ ու կոիւ, ամուսինների սրտում փոխաղարծ ատելութիւն սերմանել և այդպիսով խանգարել նրանց բաղդաւորութեանը:

Կախարդ կինը զբաղւում է զլխաւորապէս նորածին մանուկներին կոտորելով նրանց մկրտութիւնից առաջ:

Այդպիսի վաղամեռ մանուկներին յանձնում են սատանալին կամ զործադրում մի որեւէ կախարդական նպատակով:

Կախարդ կանալը սեռական յարաբերութիւն են սկսում սատանալի հետ և այդպիսով ավանդակում են իրանց մարմինը և փչացնում մարդկալինցեղը:

Սատանան կախարդ կանանց տալիս է զործադրելու շատ միջոցներ, որոնցից զլխաւորն է «կախարդական սպեղանին» կամ «կախարդական փոշին»:

Բաւական է այդ փոշուց քիչ քանակութեամբ փչել անցորդի երեսին, որպէսզի նա մեռնի:

Կախարդական փոշին պատրաստում է երեխաների դիակներից՝ զլխաւորապէս սրտից ու սկորների փոշուց—օձերի թքի հետ խառնած:

Նշանաւորն այն է, որ այդ փոշին իր մոգական զօրութիւնը կորցնում է, սովորական մարդկանց ձեռքում և ներդորմում է միայն կախարդների միջոցով:

Այդպէս էին գատում տղէտ մարդիկ, այդպէս էր նրանց կարծիքը:

Նոյնատեսակ մողական գօրութիւն ունէր և «կախարդական սպեղանին», որը բացի գրանից կախարդ կանանց համար ծառայում է իրեւ միջոց՝ շուն, կատու կամ մի այլ գաղան դառնալու համար:

Նրանք գաղանների կերպարանք են ընդունում, որպէսզի աւելի հեշտութեամբ կարողանան չարիքներ հասցնել, արտերը փչացնել, կարկուտ, փոթորիկ առաջացնել, համաճարակ հիւանդութիւններ պատճառել ևայն ևայն:

Ամենանշանաւոր գործողութիւնն այս էր, երբ կախարդ կանալը սատանաների հետ քէֆեր ու զուարժութիւններ էին անում:

Այդպիսի հացկերոյթների ժամանակ սեղանի վրա դրւում էին ամենազզուելի կերակուրներ՝ եփած օձեր, զորտեր, զիակներ, առանց մկրտութեան մեռած երեխաների սիրտ ու փայծաղ: Այդ բոլորը պէտք է ուտէին առանց հացի, աղի և զինու:

Հացկերոյթից առաջ ի միջի այլոց առանձին ժամերգութիւն էին կատարում, աղաւաղած և ծիծաղաշարժ ձեռվ ներկայացնելով եկեղեցական ծէսերը:

Այդ բոլորը շարունակւում էր մինչև արշալուս. ապա ամեն ինչ անհետանում էր:

Կախարդները ճանապարհին թափթփում էին իրանց «սպեղանին» ու «փոշին» և ամեն կողմ առարձում էին չարիք ու փորձանք:

Աննկատելի կերպով տուն վերադառնալու համար նրանք ընդունում էին ընտանի կենդանիների շան, կատուի կերպարանք:

Ճ.Դ.

Հասարակութեան բոլոր խաւերում տիրում էր այն հաստատուն նախապաշարմունքը, թէ մարդկալին բոլոր գործերում մասնակից է սատանան, թէ ամեն բանի մէջ պէտք է որոնել սատանայի աղղեցութիւնը:

Մարդիկ կարծում էին, թէ իւրաքանչիւր թփի կամ ծառի, քարի կամ պատի տակ, իւրաքանչիւր ջրհորում կամ կտուրի վրա սատանայ կայ, սատանայի ոյժն է ներգործում:

Ազգակիսի աշխարհահայեցողութիւնը միանդամայն համապատասխանում էր միջին դարերի ոգուն:

Սատանան այդ մռայլ ժամանակաշրջանի ծնունդն էր. նրա մասին դաժան առասպելը ծաղկում-զարդանում էր և իշխում քրիստոնեալ աղղերի երեակայութեան վրա, հասնելով ամենաբարձր աստիճանի և նշանակութեան:

— Սատանան, ասում է զիտնական Գրաֆը, տիսրութեան դաւակն է. նրա զարգացման համար անհրաժեշտ էն մեղք և տանջանք, որոնք սաւանի նման ծածկել էին միջնադարեան կաթոլիկութեան դաւանանքը:

Սատանան սարսափի դաւակն է և միջին դարերը—սարսափի ժամանակաշրջան:

Միջնադարեան մարդկանց խելքը քարացած էր կրօնական-միստիկական սարսափից. նրանց թւում էր, թէ ամբողջ բնութիւնը լի է գաղտնիքներով, դեերով ու հրէշներով:

Մարդիկ վախենում էին կեանքից, որովհետեւ  
նրանց թւում էր, թէ կեանքը մոլորութեան ու  
յանցանքի աղբիւր է: Վախենում էին մահից, որը  
նրանց կարծիքով բաց էր անելու յաւիտենականու-  
թեան անծալը ու անսահման անդունդը:

Ժամանակ առ ժամանակ ծագում էր այն միտքը,  
թէ արդէն հասել է աշխարհի վերջը, թէ ծնուել է  
Նեռը և շուտով սկսուելու են մարդարէների զու-  
շակած սարսափներն ու եղերական վախճանը:

Պարզ է իհարկէ, որ սատանալին անծնատուր  
լինողը մարդկութեան թշնամի էր համարւում:

Դա մի տեսակ փախստական էր, որ փախչում  
էր բարութեան բանակից դէպի թշնամական-չա-  
րիքի բանակը: Եւ այդ փախստականը աւելի ևս  
վտանգաւոր է համարւում, որովհետեւ թաղնուած  
է մնում նոյն բարութեան բանակում:

Նա աշխատում է մարդկանց հեռացնել Աստու-  
ծուց, վնասել և փչացնել իր տիրոջ՝ խաւարի իշ-  
խանի աղքեցութեամբ:

Նա մարդկութեան ամենավտանգաւոր թշնա-  
մին է: ուստի և զաղտնի են նրա նամապարհ-  
ները:

Ահա հէնց այդ բոլորի պատճառով միշնադար-  
եան կրօնական ողին անպայման մահ է պահան-  
ջում այդպիսի թշնամու համար:

Եկեղեցին միացրեց կախարդութիւնը հերետի-  
կոսութեան յանցանքի հետ և որոշեց, թէ ամենա-  
մեծ հերետիկոսութիւնը կախարդութեան չըհաւա-  
տալն է:

Այդ պատճառով էլ նա իր ամենազլիսաւոր նպատակը դարձրեց սատանալի և նրա դործիք-կախարդ-ների գէմ կռուելլր:

Ահա այդքան խորն էր եկեղեցու մոլորութիւնն ու սխալր:

Հռոմի պապերը յատուկ կոնդակներ էին հրատարակում կախարդներին ոչնչացնելու համար և իւրաքանչիւր բնակավայրում առանձին լիազօր ինկվիզիտորներ էին նշանակում:

Այդ կոնդակների մէջ զրուած էր լինում ընդհանրապէս հետևեալր. «թէ կանանցից և թէ տղամարդկանցից շատերը յարաբերութիւն են սկսում սատանալի հետ, վնասում են մարդկանց և անսուններին, վչացնում են զաշտերն ու պտուղները, հերքում են քրիստոնէական դաւանանքը և կատարում են ուրիշ, աւելի ժանր յանցանքներ...» Այդ պատճառով նշանակւում են յատուկ ինկվիզիտորներ մեծամեծ իրաւունքներով: Դրանք պէտք է իրանց պարտականութիւնը կատարեն անխտիր կերպով բոլորի վերաբերմամբ, առանց ուշագրութիւն դարձնելու կոչման կամ զրութեան վրա. պէտք է պատժեն յանցաւորներին՝ կատարած յանցանքի համեմատ նրանց բանտարկելով, կեանքից և ունեցուածքից զրկելով:

Նրանք ինչ որ հարկաւոր համարեն, կարող են անարգել կերպով զործագրել. հարկաւոր դէպքում օգնութեան կանչելով քաղաքացիական իշխանութեանը»:

Ինչու զարմանալ: Միթէ այժմ էլ քիչ կան այնպիսի իշխանաւորներ, որոնց ոչինչ են համարում

մարդու իրաւունքը և զանազան անարդարութիւններ են կատարում. —օրինակ Թիւրքիայում, Զինաստանում...

Վայ նրան, ով աշխատում է թեթևացնել յիշեալ յանցանքների պատիժը, պատճառ բերելով յանցաւորի տարիքը, հասակը, սեռը և ալին:

Այդպիսի յանցաւորները պէտք է պատժուէին ամենասարսափելի տանչանքների ենթարկուելով, խարոյկների մէջ ալրուելով:

Դատաւորները հաւատացած էին, թէ ճիշտ են այդ բոլոր երեակայական մեղաղքանքները և իրանց պարտականութիւնն էին համարում դէպի խարոյկն ուղարկել սատանալի գոհերին:

Մի զիտնական ասում է, թէ այդ խնդրում մեղաւորն ու պատասխանատուն թերեւս դատաւորը չէր, այլ ժամանակը, տիրապետող համոզմունքը: Բաղմաթիւ անմեղ կոնանց հալածելու գործում յանցաւորն ինքը դատաւորը չէր, այլ ժամանակի ողին, որ հաւանում ու արգարացի էր համարում դատաւորի կայացրած վճիռները, նոյնիսկ գովարանում էր խիստ դատաւորին...

Ողորմելի մարդկութիւն...

#### ԺԳ

Դեերին ու սատանաներին հաւատալը ալնքան խոր արմասներ էր զցել ժողովրդի հասկացողութեան մէջ և այն աստիճան աղղել էր խելքի վրա, որ նոյնիսկ նկարիչներն ու քանդակագործները ենթարկում էին նրա աղղեցութեանը: Դրանք իրանց

աշխատութիւնների նիւթ էին վերցնում զանազան երեակալական աხսարաններ՝ դևերի, ստատանաների ու կախարդների կեանքից:

Կախարդը պատկերացնուում էր իբրև մի այլանգակուած պառաւ կին՝ ու այժի կամ աւելի վրա հեծած, երեսը յետ դարձրած, ձեռքում թեշիկ, իսկ յետեռում կարկուտ և փոթորիկ:

Ժողովրդի երեակալութիւնը և գատավարութիւնը կախարդութեան մէջ մեղադրում էր զլիսաւորապէս կանանց: Այդպիսի յանցաւորներից միայն տասից մէկն էր տղամարդ լինում:

Դա առաջ էր գալիս այն հանգամանքից, որ կախարդութեան հետ կապուած էր գաղտնի-խորհրդաւոր յատկութիւն, որը աւելի կնոջ բնաւորութեանն էր համապատասխանում, քան թէ տղամարդու:

Դեռ շատ հին ժամանակներում կախարդութիւնը բացառապէս կանանց բաժինն էին համարում: Աստուածաշնչի ասելով մեղքը կնոջ միջոցով է աշխարհում մնունդ ստացել: Կանալը շատ են ենթարկում կասկածամտութեան, աւելի զգալուն են դէպի ներշնչումը և հէնց այդ պատճառով էլ հեշտութեամբ անծնատուր են լինում սատանալին: <sup>1</sup>

Բացի զրանից այդ հարցում դեր էր խաղում և այն հանգամանքը, որ կանալը բարոյապէս և ֆիզիքապէս առհասարակ աւելի զգալուն են, քան թէ տղամարդիկ:

<sup>1</sup> Տես իմ «Աինը և տղամարդը» գրքոյկը.

Բայց ի՞նչ էր այդ զոհերի յանցանքը: Այդ մասին գաղափար կարելի է կաղմել կախարդ կանանց մասին եղած գատավարութեան արձանագրութիւններից, որոնք մնացել են մինչեւ այժմ:

Դժուար է հաւատալ, թէ զրանք խկապէս փաստեր են: Այնքան անմիտ, անհաւատալի ու հրեշտաւոր բաներ կան զրանց մէջ:

Հայածողների անսահման գաժանութիւնը զարմանալի արիութիւն հալածուածների, գատաւորների բթամտութիւնը, հրեշտաւոր հաւատալիքները, գերմարդկալին տանչանքները--այդ բոլորը այնպէս խառնուած է այդ սարսափելի և միենոյն ժամանակ լիմար գատավարութիւնների մէջ, որ մարդ զալիս է այն եղրակացութեան, թէ կատարեալ խելազարներ են եղել մասնակիցները: Մարդ չէ հասկանում, թէ որսուեղից է սկսում և որտեղ է վերջանում ծիծաղելին կամ սարսափելին:

Այրւում էին տղիտութեան, մոլեռանդութեան, սնապաշտութեան խայրոյկները և հարիւր հազարաւոր անմեղ մարզիկ սարսափելի տանչանքներից յետոյ կորցնում էին իրանց կեանքը այն պատճառաբանութեամբ, թէ յարաբերութիւն են ունեցել սատանակալի հետ, թէ կախարդութեամբ են պարապել:

Այդպէս էր Աստծու, թագաւորի և արդարութեան անունով կատարւող «գատավարութիւնը»:

Այդ զարմանալի մոլորութիւնը, որ այնքան երկար ժամանակ թագաւորում էր ամբողջ Եւրոպակում, մարդկալին պատճութեան ամենացաւալի ու ամօթարեր էջն է կաղմում:

Ալղբան հրէշաւոր մոլորութիւնը, ալղբան տարածուած ու ընդհանուր սնապաշտութիւնը, որ գոյութիւն է ունեցել մեզնից ոչ շատ առաջ, խախտում է մեր հաւատոր վէպի անծնական ընդունակութիւնն ու ինքուրոյնութիւնը:

### ԺԴ

Բոլոր երկրներում օրէնքը հալածում է կախարդութիւնը, բայց արդէն ոչ այն պատճառով, որ կառավարութիւնը հաւատում է կախարդութեան ոլժին և վախենում է այդ ոլժի պատճառած չարիքից:

Անկասկած օրէնքն այժմ կախարդներին խաբերաներ է համարում. խաբերաներ, որոնք մոլորեցնում են թեթեամիտ և լիմար մարդկանց: Այժմ օրէնքը հալածում է ոչ թէ կախարդութիւնը, այլ այն խաբերայ մարդկանց, որոնք չարիքներ են զործում կախարդութեան անունով:

Մինչև այժմ էլ թէ մեզանում և թէ օտար երկրներում հասարակ ժողովուրդը հաւատում է դեերի, կախարդների ու չար ողիների մասին եղած պատմուածքին:

Բայց եթէ այդ տվետ մարդիկ ծանօթանան զիտութեան հետ, այն ժամանակ կը հասկանան իրսնց մոլորութիւնը և հաւատ չեն ընծալի ալղպիսի լիմար բաներին:

Հարկաւոր է օր առաջ հեռանալ սնապաշտութիւնից: Առհասարակ չար ողիների հաւատալը լիմարութիւն է և կոպիտ նախապաշտարմունք: Նա

ձեռնառւ է խարեբաներին: Ո՞րքան վիշտ ու տանչանք են կրում նրանից բոլորովին անձեղ մարդիկ:

Ամօթ է ասել, որ նոյն իսկ առանձին զբոքեր էին հրատարակւում այդ մասին, թէ ինչպէս մարդիկ պայման են կապում սատանալի հետ և այդ պայմանադրութիւնը հաստատւում է մարդկալին արիւնով, թէ ինչպէս սատանան իր ճանկերով նշան է գնում զոհի մարմնի վրա և թէ ինչպէս ոկտը է որոնել այդ «սատանալի զրոշմը»:

Կախարդութեան հաւատալը հին ժամանակ-ներում մարդկանց այն աստիճան մոլորեցը էր, որ նոյնիսկ իշխանները, զատաւորները և հոգևորականութիւնը ենթակալ էին նրա ազգեցութեանը և մեծ մեղք էին համարում կախարդութեան չհաւատալը:

Շատերը իրանց նպատակ էին գնում որոնել «կախարդներին», «ջադուներին» և աեսնել, թէ սատանան ինչպէս է դրանց մարմնի վրա զրոշմել իր կնիքը: Եւ հազարաւոր մարդիկ զոհ էին գնում տղիառութեան և մոլորութեան:

Հաւատացնում էին, թէ կախարդների մասին մատնութիւն անելը հոգեշահ մի գործ է: Նոյն իսկ առանձին վարձատրութիւն էին խոստանում ալդպիսիներին:

Մատնութիւն—ի՞նչ կայ աշխարհում զրանից աւելի կեղառա ու ստոր: Լաւ է մեռնել, ոչնչանալ, քան թէ գորանով պարապել:

Չորս-հինգ ընկերներ՝ քահանալիք ու տղամարդիկ, հաւաքւում են զիրք կամ լրադիր կարդալու.

չեն հարբում, անբարովականութիւն չեն անում, ոչ  
ոքի վնաս չեն հասցնում, բայց տեսնում ես մէջ է  
դալիս մատնութիւնը: Անազնութեան, բթամառու-  
թեան ու չարասրտութեան պատճառով բաղմա-  
թիւ անմեղ մարդիկ վնասում, կորչում են այն  
պատճառով, որ ուզում են առաջ գնալ, զարդանալ  
և հասարակութեան ու պետութեան օգտակար լինել:

Երբեմն էլ մատնիչը ինքը մանում է ալդպի-  
սի խօճակներ, առաջարկում զանազան լիմարու-  
թիւններ, և ապա ինքն էլ մատնում ալդ մասին  
ուր որ հարկաւոր է:

Եւ ալդպիսի մարդիկ ապրում են՝ աշխարհում..

Միշին սնապաշտ գարերում մատնութիւնները  
մի անվերջ շղթայ էին կազմում: — Այս ինչ կինը  
գովեց, հաւտնեց իմ կովին և կովը հիւանդացաւ...  
Ես շրի էի գնում. ճանապարհին պատահեցի հա-  
րեանուհուս. հէնց որ նո ինձ մօտեցաւ, իսկոյն  
կողըս ծակել սկսեց... Տեսնում եմ, պառաւը ման  
է գալիս դաշտում, ամպերին է նայում և ի՞նչ. մի  
քանի րոպէից լետով կարկուտ է թափւում...

Ահա ալդպէս երեք կախարդ կին բռնուած են.  
Ճէկը կովին է վնասել, միւսը հարեանուհուն ցաւ  
է պատճառել, իսկ երրորդը կարկուտ առաջացրել:

Մարդ աշխատում է, խնայողութեամբ է ապ-  
րում, փող է լետ դցում և ահա մատնում են.  
«սատանան նրա լուսամուտից փող է ներս ձգում»:

Մի որեւէ կին յանախ անտառ է գնում և  
ահա դարձեալ մատնութիւն. «վհուկ է, թունա-  
ւոր խոտեր է հաւաքում...»

Օրիորդը առաւօտները ուշ է վեր կենում քնից. սնապաշտ մարդիկ զրանից եղրակացնում են, թէ նա դիշերները սատանաների հետ խնջոյք է անում:

Մի կին շատ վշտացած էր իր ամուսնու մահից յետոյ:

— Ինչու դու միշտ ալդպէս տիսուր ես, հարցնում է լրտեսը.

— Ալրիացել եմ, սպատասխանում է կինը. կորցրել եմ ամուսնական երջանկութիւնս, ի՞նչպէս չը գշտանամ:

— Սուտ ես ասում. խիզճդ մաքուր չէ. սատանայի հետ յարաբերութիւն ունես,— ասում է լրտեսը և մատնում. «այս ինչ կինը կախարդ է...»

Գիւղացին մի կնոջից զողանում է պարկը և զորանով կարկատում իր շալվարը: Մի քանի օրից յետոյ նրա ոտները ցաւել են սկսում:

— Ուրեմն դա պարկիցն է, ուրեմն պարկի տէր կինը կախարդ է— ասում է զող գիւղացին:

— Իհարկէ, վրա է բերում ընկերը. երկու շարաթ սրանից առաջ՝ կարծեմ ամսի 13-ին էր— (դա սատանայի թիւն է) — ես հաց կերայ ալդ պառաւի տանը. եկայ տուն և իսկոյն փորս ցաւել սկսեց...

Ալդպիսով երկու գիւղացին խօսը մէկ արած մատնում են խեղճ կնոջը, իրու կախարդի:

Երեխան կաւից զեղեցիկ առարկաներ է շինում. ով պէտք է ալդ փոքրիկին ալդպիսի արհեստ սովորեցնէր. իհարկէ սատանան է օգնում, վճռում են սնապաշտ մարդիկ և իսկոյն մատնում:

Եւ այդ բոլոր թշուառականներին՝ զիւղացիներին, պառաւներին ու երեխաներին ալրում էին խարոյիների վրա:

Ահա թէ ինչպիսի դատաւորներ էին, ի՞նչպիսի վճիռներ էին տալիս...

Կախարդների ու վհուկների ժառանդներն էլ յանցաւոր էին համարւում հէնց միայն այն պատճառով, որ ծնուել էին յանցաւոր ծնողներից:

Երեմն էլ լրտեսներն ու մատնիչները զոհ էին դարձնում ամեն մի պատահողի և այնպիսի դաժանութիւններ էին կատարում, որ ակներև էր դառնում նրանց անարդարութիւնն ու ստութիւնը:

Այդ գէպըում ժողովուրդը կատաղում էր, հալածում էր զրանց և ծեծում անխնայ կերպով:

Մի լրտես մեռնելուց առաջ խոստովանեց, որ խալրոյիկի զոհ է դարձրել 220 բոլորովին անմեղ կանանց միայն այն պատճառով, որպէսզի ստանայ նշանակած վարձատրութիւնը:

Այդպէս ուրեմն լրտեսում ու մատնում էին շահասիրութիւնից, չարասրտութիւնից, տգիտութիւնից և նախանձից զրգուած...

Եւ սնապաշտութիւնը քաշալերում էր զրանց: Ո՞րպիսի ցաւալի իրողութիւն...

## ԺԵ

—Ահա կախարդ, ահա վհուկ, բացականչում է մատնիչը և մի գատարկ կասկածից զրգուած մարդու ենթարկում են սարսափելի տանջանքներին

Նատ անդամ դատաւորը կամ հարեւանները նախ քան մեղագրեալին հարցաքննելը փորձէ էին ենթարկում, որպէսզի համոզուեն, թէ արդեօք նիշտ որ նա յարաբերութիւն ունի սատանալի հետ:

Փորձը կատարւում էր ասեղներով. մեղագրեալին մերկացնում էին ոտից մինչեւ զլուխ և գահինը սկսում էր ծակծկել մարմինը, որպէսզի դանի «սատանալի դրոշմը»:

Հաւատացնում էին, թէ մարմնի այն մասը, որտեղ սատանան զրոշմում է իր անտեսանելի կնիքը, բոլորովին անզգալի է դառնում: (Վերեւում մենք տեսանք, որ մարմնի մի քանի մասերը երբեմն հիւլանդու զրութիւն մէջ են ընկնում՝ բժանում, անզգայ են դառնում: Մինչեւ անդամ արիւն կարող է դուրս չը դալ այդ տեղերը ծակած ժամանակի:)

Դահինը ծակծկում էր դժբաղդ մեղագրեալի մարմնի մասերը, մանաւանդ սպի, ցան կամ խաշեղած աեղերը. ծակրւմ էր և նայում, թէ արդեօք արիւն դուրս կը դա՞լ:

Եթէ մի որեւէ տեղից արիւն չէր դալիս, այդ գէպը ում յանցանքը ապացուցուած էր համարւում:

Դահինը իւրաքանչիւր կախարդի կամ վհուկի դանելիս՝ ստանում էր իր վարձատրութիւնը և այդ պատճառով շատ եռանդով էր գործում:

Ահա թշուառ «վհուկը» դատարանումն է. «խոստովանում ես քո մեղքը, հարցնում է դատաւորը: Թեթև պատիժ կը նշանակենք. բեզ կը խեղդեն, կը զլխատեն և ապա դիակդ կալրեն: Իսկ

եթէ չը խոստովանես, քեզ կենդանի կայրեն խալ-  
րովկում»:

Այդպէս էր կատարւում դատավարութիւնը և  
աշխարհական ու հոգեորական դատաւորները մեծ  
ախորժակով էին դատապարառում, որովհետեւ դատա-  
պարառուածի ունեցուածքը մատնիչների, դահիճների  
ու դատաւորների բաժինն էր դառնում: Շատ ան-  
դամ էլ դատապարառում էին առանց շահասիրա-  
կան ձգտումների, կուրօրէն հաւատալով, թէ սա-  
տատան խկապէս յարաբերութիւն կարող է ունե-  
նալ մարդկանց և անասունների հետ:

Ահա գարծեալ նմուշներ այդ անապաշտ դա-  
տավարութիւնից:

—Այրուած վհուկը ասել է, որ քեզ տեսել է  
սատանաների խնչոյքում, ասում է դատաւորը:

—Շատ բան կասեն տանջանքների ենթար-  
կուելիս. աւելի լաւ է հարցրէք ամուսնուս, երե-  
խաներիս ու հարեաններիս: —Բոլորն էլ զիաեն, որ  
ես զիշերները տանից չեմ հեռացել:

—Դու երեխալի զիակը հանել ես զերեղմա-  
նից քո կախարդական նպատակների համար...

—Հրամայեցէք քանդել զերեղմանը ևալն ժա-  
մանակ կը տեսնէք, որ զիակն ալնաեղ է:

Կանչում են վկաների. նրանք էլ մեղադրական  
ոչինչ չեն ասում: Բայց յանկարծ մէկը երկիւղից  
դրդուած մի սխալ բառ է արտասանում և հար-  
ցը խնճւում է:

—Չը խոստովանեցիր... Տանջել, հրամայում են  
դատաւորները:

Ասում են, որ այժմս էլ մի քանի տեղերում զործադրուում է տանջելու սիստեմը, թէև մարդիկ համոզուած են, որ տանջանքների ազդեցութեան տակ արած խոստովանութիւնը կամ վկայութիւնը արժէք չունի:

Եւ իսկապէս. ի՞նչ լիմարութիւններ, ի՞նչ դատարկ բաներ չես ասի, երբ քեզ սարսափերի կերպով ծեծում են, ալրում են, կտրատում են...

— Մըդեօք չես տեսել այս ինչ մարդուն, այս ինչ կնոջը, թէլագրում է դատաւորը, նրանց վրա կասկած կալ...

Մեղագրուածը զիտէ, որ զրական պատասխան տալ, մատնանիշ անել մէկին—կը նշանակէ նոր փորձանքներ առաջարկել թէ իր և թէ ուրիշների համար: Բայց երբեմն երկիւղից կամ լիմարութիւնից դրդուած սուտ է խօսում և զրանով նոր զնիեր պատրաստում:

Հին ժամանակներում սարսափելի վիճակ ունէին բանտերը: Կախարդների համար ընտրում էին զրանցից ամենասարսափելին—խոր, խոնաւ ու խաւար փոս, որը երբէք չէ մաքրուում, շրջապատուած է կեղառվ ու գարշելի օդով:

Ահա մի ուրիշ բանտ. ներքնայարկ նկուղ է, մէջ տեղում սիւն. նրա շուրջը տախտակներ են մեխած, իսկ այդ տախտակների վրա ծակեր կան, որոնց մէջ ամբացրած են բանտարկեալի ծեռքերն ու ոտները. չէ կարելի ոչ շարժուել և ոչ էլ դուրս քաշել ծեռք ու ոտ:

Թօշուառակաները խելագարւում էին, անդամալուծում և մեռնում:

Բանտից շատ քչերն էին ազատւում. այնտեղից ճանապարհը տանում էր միայն դէպի փորձատանջանք կամ խայրովիկ:

Իսկ ով որ փորձատանջանքի ենթարկուելուց առաջ ընդունում էր իր վրա բարդած երեակայական յանցանքները—նրան խսկոյն գլխատում, կախում էին և այրում խայրովիկի վրա:

Մինչև պատժի տեղը «վհուկին» տանում էին քաշ տալով, սայլի յետելից կամ ծիու պոչից կապած, գլուխը կախ զցած: Նրա բերանն էլ կապում էին, որպէսզի լացն ու նիչը չը լսուի:

Յետելից զնում էր հոգեորականութիւնը, զնում էին զինւորներ. խմբւում էր ժողովուրդը: Խայրովիկների մօտ եկեղեցական երգեցիկ խումբը աղօթքներ էր երգում:

Ահա այդպէս խայրովիկների վրա զոհուում-կորչում էին հաղարաւոր անմեղ մարդիկ:

Դրանք մարդկային տղիտութեան ու սնապաշտութեան զոհներն էին:

## ԺԶ

Բարեբախտաբար կային և այնպիսի մարդիկ, որ հասկանում էին, թէ ո՞րքան սարսափելի, ո՞րքան վնասակար է այդ կոյր սնապաշտութիւնը:

«Վհուկներ» ու «սատանաներ» հալածողների դէմ հնչեցին հակառակ ծայներ՝ մէկը, երկուսը, ապա տասնեակներ, հարիւրներ ու հաղարներ....

Վերջապէս առողջ խելքն ու գիտութիւնը յաղթանակցին:

Սկզբում «կախարդութեան» հալածիչների հակառակորդներին գատապարտում էին. «սատանաների» կողմնակից էին անուանում, բանտ էին նստացնում, տանջում էին, բայց այդ ամենը չէր վհատեցնում նշմարտութեան ու արդարութեան զինորներին:

Այդ տեսակ առաջին զինորներից էին բժիշկ Վելերը և Շակ քահանան:

Վելերը թէ խօսքով և թէ զրչով կռւում էր ընդհանուր մոլորութեան դէմ: Նա եռանգուն կերպով բացատրում էր, որ «վհուկ» ու «կախարդ» համարուած անհատները մեծ մասամբ թուլակազմ և հիւանդոտ են, ուստի ունեն հիւանդոտ յատկութիւններ:

— «Երբեմն դրանք իրանք էլ պատրաստ են հաւատալ, թէ կարող են վնաս հասցնել, փչացնել մարդկանց, անասուններին ու ցանքսերին, բայց իրականապէս բոլորովին անմեղ են... Պարոններ, գտարեցրէք անմեղ արիւն թափելը, իզուր տանչանքներ պատճառելը: Զէ որ այդ բոլոր կանալք, որոնց անխնայ կերպով բանտարկում, տանջում ու

<sup>1</sup> Փամանակ է, որ մեր ժողովուրդը հասկանայ, թէ որքան մեծ գեր կարող է խաղալ կըթուած քահանան: Քահանան պէտք է լինի անպատճառ ընտրովի և թեմական դպրոց կամ ձեմարան աւարտած: Ընտրողական սկըրբունք և կըթուած քահանայացուներ, դա պէտք է լինի մեր ժողովրդի նշանաբանը:

ալրում են, բոլորովին անձեղ են: Նրանց դատապարտում են չեղած յանցանքների համար:

«Եթէ նրանք խոստովանում յանձնառու են լինում, այդ նրանից է, որ աւելի լաւ են համարում մի անգամից մեռնել կրակի մէջ, քան թէ անվերջ տանջանքներ կը ել:

«Անսիրտ դատաւորներն ու դահիճները կարծես չեն հասկանում, որ անձեղ արիւն են թափում:

«Եթէ մեղաղրուածներից մէկը ոչինչ չի խոստովանում և սարսափելի տանջանքների ենթարկուելուց յետով մեռնում է քանտում—դատաւորները այդ մահը բացատրում են նրանով, թէ դա սատանալի գործն է: Սատանան չէր ուզում, որ «վհուկը» դադանիքներ յալտնէ, այդ պատճառով էլ մահացրեց նրան...»

Եւ տղիտութիւնից կուրացած մարդիկ, «վրհուկ» հալածողները բողոքում էին Վելերի այդ սուրբ խօսքերի դէմ:

Նրանք մահուան պատիժ էին պահանջում այն բոլոր մարդկանց համար, որոնք այդպիսի զրբեր են գրում, «սատանալին ծառալութիւն մատուցանելով»:

— «Այդպիսի զրբերի երեան դալը, ասում էին նրանք, ցոյց է տալիս, թէ որբան ուժեղ է սատանալի ազդեցութիւնը աշխարհիս վրա...»

Այն ժամանակուայ տղէտ հոգեորականութիւնը, ասում է զիտնական Բետիները, նզովքի ենթարկեց բժիշկ Վելերի զիրքը և նրան էլ խալրոյկի զոհ կը դարձնէր, եթէ նա փախուստով չազատուէր:

Պակաս ուշազրաւ չէ Շպէ քահանալի դոր-  
ծունեռութիւնը:

Այս քահանան դեռ երիտասարդ հասակում նշա-  
նակուած էր մահուան դատապարտուած կախարդնե-  
րի հոգեւորական:

Նա շատերի խոստովանանքն էր լսել, անթիւ  
անդամ ներկայ էր եղել քննելու, տանչելու և այ-  
րելու ժամանակ: Եւ այդ բոլորից յետոյ զրում էր.  
— «Ես համոզուեցի, որ դատապարտուածները ան-  
մեղ են. մաղերս սպիտակեցին այն սարսափելի իրո-  
ղութիւնից, որ իմ քրիստոնեայ եղալը ներ աւե-  
լի դաժան են, քան կռապաշաները: Քրիստոսի սուրբ  
վարդապետութիւնը՝ սիրոյ վարդապետութիւնը չէ  
փափկացրել նրանց սրտերը:

«Ցաւալին այն է որ եկեղեցու ժամասացու-  
թիւնը այնպէս է կատարւում, որ ժողովուրդը ոչինչ  
չէ հասկանում. մենք էլ, հոգեւորականներն էլ մե-  
զաւոր ենք, որ չենք կրթում, լուսաւորում ժողո-  
վրդին, այլ ընդհակառակը ամրացնում ենք նրա սնա-  
պաշտութիւնը:

«Եկեղեցին պէտք է կրօնական-բարոյական տեղ  
լինի, իսկ այժմ հոգեւորականութիւնը հնչեցնում է  
միայն բառեր, որոնցից ոչ ոք ոչինչ չի հասկա-  
նում...

«Դատաւորների վրա ոչ մի ապացուց, ոչ մի  
արտասուբ կամ աղերսանք չի աղջում, շարունա-  
կում է հայր Շպէն. կախարդութեան համար մե-  
զալրուածը անպատճառ մեղաւոր պէտք է դուրս  
գալ:

«Եթէ մեղաղրուածը բնկնւում և լռում է—  
զա պարզ ապացոյց է, որ նա յանցաւոր է: Եթէ յան-  
ցանքը խոստովանում է, նրան կախաղան են բար-  
ձրացնում և մարմինը այրում են խալրոյի վրա:  
Եթէ չի խոստովանում—այդ ժամանակ էլ սարսա-  
փելի տանջանքների է ենթարկւում և կենդանի այր-  
ուում: Այսպէս թէ այնպէս, նա պէտք է մեռնի:

«Եթէ տանջանքների ժամանակ նա հայացքը  
այս ու այն կողմ է ուղղում—կը նշանակէ սատա-  
նալին է որօնում. Եթէ ուղիղ մի կետի վրա է նայ-  
ում—կը նշանակէ արդէն տեսնում է սատանալին:

«Եթէ նա զիմանում է տանջանքների—կը նշա-  
նակէ սատանան պաշտպանում է նրան: Եթէ չի զի-  
մանում տանջանքների, մեռնում է—կը նշանակէ սա-  
տանան է մեռցնում նրան, որ գաղանիքներ չը յախնէ:

«Զեզ եմ զիմում, զատաւորներ, և հարցնում՝  
ինչու էք աշխատում ամեն տեղ վիուկներ ու կա-  
խարդներ որոնել. ուղում էք ասեմ թէ որտեղ կա-  
րող էք դանել:

«Զերբակալեցէք առաջին պատահող մարդուն  
և տանջանքների ենթարկեցէք. այդ տանջանքների  
աղղեցութեան տակ նա ստիպուած կրլինի խոստո-  
վանել, որ կախարդ է, թէե չի էլ հասկանում, թէ  
ի՞նչ է կախարդութիւնը:

«Իսկ եթէ նա յամառութիւն ցոյց տայ—դա  
պարզ նշան է, որ նա կախարդ է... Տանջեցէք նրան  
աւելի խիստ կերպով... Նորից, նորից տանջեցէք և  
նա վերջապէս ստիպուած կը լինի խոստովանել և  
մատնել ու մ որ ուղէք, ինչ որ հրամայէք:

«Վերցրէք մի որեւէ բարձրաստիճան հողեռականի. վերցրէք հէնց չոռմի արքեպիսկոպոսին, որի օրհնութեամբ կատարւում են տանջանքները և փորձի համար տանջեցէք նրան... չաւատացնում եմ ծեղ.—նա էլ կը խոստովանի, թէ կախարդէ է, նա էլ կասէ ինչ որ ուղենաք»:

Երկար ժամանակ այդպէս խօսում ու զրում էին նա և ուրիշ մարդիկ, մինչև իր իշխանաւորները օրէնքներ հրատարակեցին, հերքելով կախարդների գոյութիւնը և արգիլելով կախարդութեան մասին գատավարութիւնը:

Քիչ ժամանակ անցնելուց յետոյ կարգադրութիւն եղաւ, որ եթէ մի որեւէ անհատ ինքը յայտնէ, թէ յարաբերութիւն ունէ սատանալի հետ, հարկաւոր է նրան հիւանդ համարել և հիւանդանոց ուղարկել բժշկելու համար:

Ժողովրդի համար էլ կամաց-կամաց բացուեցին դպրոցներ, տարածուեց ու նոյն իսկ պարտազիր դարձաւ զրադիտութիւնը և մարդիկ քաղաքակրթութեան ազգեցութեան տակ համոզուեցին, թէ որքան մոլորուած էին, թէ որքան փրկարար է գիտութեան լոյսը:

### ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ.

Գիտութիւն և քաղաքակրթութիւն — ահա սրբազն խօսքեր:

Վայրենիների որպիսի ողորմելի բազմութիւն կը լինէր մարդկութիւնը, որքան թշուառ բնակավայր

կը դառնար երկիրը, եթէ նրա վրա չը փայլեր զիտութեան արեղակը:

Բաւական է յետ նայել դէպի անցեալը, տեսնել թէ որքան մոլորութիւններ, հրէշաւոր սխալներ ու լիմարութիւններ են վերացել զիտութեան շնորհիւ, որպէսզի ակնածութեամբ խոնարհուենք այդ փրկարար զօրութեան առաջ:

Ո՞վ զիտէ, զուցէ մարդ արարածը, որը այդքան դանդաղ ու յամառ կերպով է ազատուել իր մոլորութիւններից, սխալներից ու խաւար ծզտումներից—զուցէ այժմ էլ, մեր լուսաւոր գարում էլ շատ սխալներ ու մոլորութիւններ է կատարում, որոնց ուղղողն ու բացալայտողն ապագայ սերունդները պէտք է լինեն:

Գուցէ այս բոլոր հաւատալիքներն ու համոզմունքները, որոնք մեր ներկայ կեանքի հիմքն են կաղմում, որոնց վրա հաստատուած են մեր հասարակական ու քաղաքական կարգերը, աւելի արժէք չունեն, քան «սատանաների» ու «կախարդութեան» ժամանակաշրջանի մոլորութիւնները:

Գուցէ...

Թող մարդկութիւնը շարունակ խարուի ու մոլորուի, թող իւրաքանչիւր ժամանակաշրջան ունենալ իր սխալներն ու մոլորութիւնները...

Բայց անփոփոխ կրմնայ այն զիտակցութիւնը, թէ զիտութիւնը առաջ է տանում մարդկանց ուղիղ ճանապարհով, թէ զիտութեան իւրաքանչիւր քայլը ոչնչացնում է մոլորութեան «մի հրէշ» և «մարդում է» մարդուն:

Աւրեմն ժողովրդի բոլոր խաւերի համար անհրաժեշտ են զիտութեան զինւորներ:

Առայժմ զիւղերում պէտք է գործեն քահանաները, ուսուցիչները և բժիշկները: Բոլորն էլ զիտութեան լուսով զինուած:

Դրանց, կամ դրանց նման կրթուած մարդկանց խորհպին պէտք է զիմել կեանքի ծանր բուդեներում, մի որեւէ փորձանքի կամ զժուարութեան ժամանակ, որովհետեւ դրանք շատ բան են կարգացել, շատ բան սովորել...

Միայն դրանք կարող են խկապէս փրկարար ու առողջաբար խորհուրդներ տալ առանց խաբելու կամ վախեցնելու:

Իսկ հմայքի ու կախարդութեան բոլոր միջոցները, որ գործադրում են «հերիմներն» ու «ֆալշիները»՝ չըով, եղունգներով, մաղերով կամ մի այլ բանով, «թլիսմ» անելը, «նզովքի կամ չարի զէմ» զիր անելը, «թլիսմներով» հիւանդութիւն բժշկելը — այդ բոլորը խաբերայութիւն է: Դրանց հաւատալ կարող են միայն տղէտ մարդիկ:

Իսկ հասկացող մարդիկ, կրթուած, ուսում առած մարդիկ երեք չեն հաւատում այդպիսի լիմար բաների, աշխատում են եկեղեցական բարողներով, զպրոցական գասերով, խորհուրդներով, զըքերով, թերթերով ու ամսագիրներով ազգել ժողովրդի վրա և հասկացնել, որ անխելքութիւն է կախարդութիւնից, զեերից ուսատանաներից վախենալը:

Եւ եթէ զիւղերում ու քաղաքներում զարգանայ զիտութիւնը, զպրոցներ ու թատրոններ բայ-

ւին, զոնէ շարժական գրադարաններ հիմնուեն և կարգացած ու կրթուած մարդիկ յառաջ գան, այն ժամանակ տղիտութեան և խաւարի ոյժը կոչնչանայ դիտութեան լոյսի տռաջ:

Յոյս չպէտք է զնել կառավարութեան վրա, նա շատ գործեր ունի անելու. նրան օգնողներ են հարկաւոր: Ուրեմն մենք ինքներս պէտք է աշխատենք մեր ցաւերին զարման դանել:

Մարդը ամեն ինչ կարող է անել: Նրա հոգու խորքում և արտաքին աշխարհում թաղնուած են անսահման ոյժ, մաքերի ու գաղափարների անվերջ շղթայ, որ բացուել ու զարդանալ կարող են որոշ պայմանների ազդեցութեամբ:

Հարկաւոր է սաեղձել այդ պայմանները և միշտ առաջազիմել զէպի լաւն ու զեղեցիկը, զէպի բարութիւն ու կատարելագործութիւն:

Զէ՞ որ մարդը ազբում է լաւ, բարի ու փայլուն գործերի համար և ոչ թէ խաւարի ու չարութեան համար:

Ոչ ոք ոչ մի բալլ առաջ չէր գնալ, ոչ մի բանի ձեռք չէր մեկնի, եթէ հաւատացած չը լինէր, թէ կարող է նպատակի հասնել, թէ այն առարկան, որին ձեռք է մեկնում, աւելի լաւ է, բան թէ ձեռքի տակ ունեցածը:

Աշխատենք ուրեմն անգադար. ծգտենք միշտ զէպի առաջ, յոյս զնելով սեփական ոյժերի վրա: Չը մոռանանք, որ «Ժողովրդի ծայնը Աստծու ծայնըն է», որ ժողովրդի ոյժը սարեր կարող է տապալել:

Ուրեմն առաջ, միշտ զէպի առաջ:

Մէկը բոլորի համար, բոլորը մէկի համար—  
ահա այդ պէտք է լինի մէր կեանքի ու գործունէու-  
թեան նշանաբանը:

Աշխատեցէք ձեզ համար և թող ուրիշները  
դան ձեր յետեից, մի հրամայէք, այլ օրինակով ու  
գործով սովորեցրէք:

Մեր ժամանակակից հասարակական մտքի եր-  
կու զօրեղ հոսանքները՝ անհատականութիւնը և  
համերաշխութիւնը, երբ և իցէ պէտք է միանան և  
հզօր հոսանք կազմեն:

Այդպիսի միաւորութիւնը պէտք է լինի թէ,  
ներկայ և թէ ապագայ սերունդների նպատակը:

Ինտանեկան և զպրոցական կանոնաւոր կրր-  
թութիւնը պէտք է մարդկանց մէջ զարգացնէ մի  
կողմից անհատական աղատութիւնը, իսկ միւս կող-  
մից համերաշխութեան ու անծնաղոհութեան ար-  
ժանիքները: Եւ այն ժամանակ այդ երկուսի ներ-  
գաշնակութիւնը զիտութեան լոյսի հետ միացած  
առաջ կրտանի մարդուն զիտութեան ճանապարհով:

Զինուենք ուրեմն զիտութեան զէնքով, թօ-  
թափենք տղիտութեան ու խաւարի քօղը և զի-  
մենք զէպի առաջ, միշտ բարձր պահելով մեր նշա-  
րաբանը.

«ԹՊՊ ԿՈՐՉԻ ԽԱԽԱՐԻ,

«ԿԵՑՑԵ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԵԳԱԿԻ:»

25



